# ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

35ՐԴ. ՏԱՐԻ ԹԻՒ 47 (1747) ՇԱԲԱԹ, ԴԵԿՏԵՄԲԵՐ 19, 2015
VOLUME 35, NO. 47 (1747) SATURDAY, DECEMBER 19, 2015

Պաշտօնաթերթ՝
Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան
Արեւմտեան Ամերիկայի

MASSIS Weekly
1060 N. Allen Ave. Suite 101
Pasadena, California 91104


ՄԵՐ ԱՆԿԻՒՆԷՆ

## Ձախող Քննութիւն Մը Եւս

Դեկտեմբեր 6-ին Հայաստանի մէջ տեղի ունեցած հանրաքուէին շուրջ բարձրացած աղմուկի արձագանգները կը շարունակուին: Սահմանադրական փոփոխութիւններուն դէմ եղողները կը խօսին լայնածաւալ խախտումներու մասին: Ինթըրնեթային կայքէջերը ողողուած են կրկնակի քուէարկութեան, կաշառք բաժնելու, քուէատուփերը լեցնելու, դիտորդներու եւ լրագրողներու դէմ ճնշումներ գործադրելու մասին պատմող դրուագներով:

Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութիւնը, որ սկզբունքայնօրէն կողմնակից էր առաջարկուող փոփոխութիւններուն, յայտարարեց, որ քուէարկութեան գործընթացը եկաւ ստուերելու հանրաքուէի ամբողջ իմաստն ու էութիւնը:

Տեղական դիտորդական կազմակերպութիւններու կարծիքով, այս ընտրութիւնները կրնան նկատուիլ ամենէն խոցելիներէն մէկը՝ վերջին տարիներուն: Միջազգային դիտորդական առաքելութիւնները եւս, իրենց յատուկ դիւանագիտական լեզուով եկան հասկցնելու իշխանութիւններուն, որ գործընթացին նկատմամբ ժողովուրդի վստահութիւնը վերականգնելու հարց ունին լուծելիք: Միացեալ Նահանգներու դեսպանատան կողմէ հրապարակուած յայտարարութիւն մը կը խօսի կեղծարարներու դէմ պատժամիջոցներ ի գործ դնելու մասին:

Այս բոլորին դիմաց, իշխող Հանրապետական կուսակցութեան ներկայացուցիչներու պատասխանները կը մնան անբաւարար եւ ոչ համոզիչ: Դարձեալ կրկնելով, որ տեղի ունեցած խախտումները չեն կրնար ազդել ընտրութիւններու արդիւնքներուն վրայ, ժողովուրդի տեսակէտը արհամարհելու դրսեւորումներու շարքին կը պատկանին:

Սահմանադրական փոփոխութիւններու գլխաւոր նպատակը կը ներկայացուի որպէս կուսակցութիւններու դերի բարձրացումը՝ խորհրդարանական վարչաձեւին անցում կատարելով: Սակայն, այդ նպատակին հասնելու ճամբուն վրայ Հայաստանի իշխանութիւնը կարեւոր քայլ մը ունին կատարելիք: Անոնք պէտք է ունենան քաղաքական կամք՝ ազատ, արդար եւ ժողովրդավարական ընտրութիւններ կազմակերպելու ուղղութեամբ, այլապէս, համակարգը վարչապետական ըլլայ թէ խորհրդարանական, մեծ նշանակութիւն պիտի չունենայ եւ ոչ ալ պիտի կրնայ լուծուել երկրի դիմագրաւած բազմաթիւ դժուարութիւնները:

Իշխանութիւնը պահպանելու համար ամէն ինչ ընդունուած է սկզբունքով գործողները, անգամ մը եւս ձախողեցան իրենց քննութեան մէջ:

«ՄԱՍԻՍ»

## Միացեալ Նահանգները Կրնայ Պատժամիջոցներ Կիրառել Ընտրախախտումներուն Մասնակցած Պաշտօնեաներուն Դէմ

*Դեկտեմբեր 14-ին հրապարակուած պաշտօնական յայտարարութեամբ մը Հայաստանի մօտ Միացեալ Նահանգներու դեսպանատունը զգուշացուց որ, Ուաշինկթըն իրաւասութիւն տուած է դեսպանատան՝ հանրաքուէի արդար ընթացքին միջամտած անձերու մասին տեղեկութիւնները օգտագործել նպատակով:*

*«Ամբողջ աշխարհի տարածքին կոռուպցիայի դէմ պայքարելու Միացեալ Նահանգներու պարտաւորութեան համահունչ, ԱՄՆ դեսպանատունը կրնայ նաեւ հիմք ընդունիլ ընտրախախտումներու վերաբերեալ հաղորդումները եւ գնահատելու, թէ արդեօք անձինք, որոնք ուղղակիօրէն միջամտած են Դեկտեմբեր 6-ի հանրաքուէի անաչառ ընթացքին, կրնա՞ն մասնակցիլ դեսպանատան ծրագիրներուն եւ միջոցառումներուն»,- ըսուած է յայտարարութեան մէջ:*

*Դեսպանատունը կը յայտնէ որ, իրենք կը շարունակեն հետեւիլ քուէներու վերահաշուարկի ընթացքին, եւ ողջունելով գլխաւոր դատախազի եւ մարդու իրաւունքներու պաշտպանի հրապարակային յանձնառութիւնը՝ հնչեցուած արժանահաւատ հաղորդումներով լիարժէք քննութիւններ ապահովելու վերաբերեալ, դեսպանատունը կ՛ընդգծէ. - «Մենք կը վերահաստատենք, որ խախտումներու համար պատասխանատուներու նկատմամբ քննութիւններն ու դատական կարգով հետապնդումները պէտք է ըլլան թափանցիկ ու հրապարակային, որպէսզի Հայաստանի ժողովուրդի մօտ ըլլայ վստահութիւն՝ ընտրական գործընթացի անաչառութեան վերաբերեալ»:*

*Տարածաշրջանային հետազօտութիւններու կեդրոնի ղեկավար Ռիչըրտ Կիրակոսեանի կարծիքով, այս յայտարարութիւնը յստակ ուղերձ է Հայաստանի իշխանութիւններուն, որ ընտրակեղծիքները այլեւս հանդուրժելի չեն: «Սա նշանակալի եւ հաւանաբար առաջին քայլն է՝ Հայաստանի իշխանութիւններու նկատմամբ պատժամիջոցներու կիրառման ուղղութեամբ, պատժամիջոցներ, որոնք նման կրնան ըլլալ Ռուսաստանի դէմ սահմանուած պատժամիջոցներուն եւ կը կիրառուին ամբարտաւան կառավարութեան արարքները պատժելու համար: Կը կարծում որ, Հայաստանի կառավարութիւնը կը թերագնահատէ այս յայտարարութիւնը», - ըսաւ ան՝ շարունակելով. - «Հաւանական է որ, Հայաստանի պարագային եւս գործ կ՛ունենանք «Մագնիտսկիի ցանկ»-ին հետ»:*

*2012-ին. Միացեալ Նահանգները պատժամիջոցներ սահմանեց ռուսաստանցի այն իրաւապահներու նկատմամբ, որոնք առնչութիւն ունեցած էին գործարար Սերգէյ Մագնիտսկիի սպանութեան հետ: Արգիլուեցաւ այդ անձերուն*

*Շար.ը էջ 5*

## Ընթացքի Մէջ է Ամերիկահայութեան Թանգարանի Շինութեան Գործարքը



*Հայ համայնքի ներկայացուցիչները, որոնք ներկայ եղան Կլէնտէյլի Քաղաքապետական խորհուրդի նիստին*

*Արեւմտեան Միացեալ Նահանգներու Համահայկական Մարմնի նախաձեռնութեամբ ընթացք առած ամերիկահայութեան թանգարանի շինութեան ծրագրի մշակումը ընթացքին մէջ է:*

*Այս առթիւ, կարեւոր քայլ մը առնուեցաւ երբ համայնքի ներկայացուցիչները ներկայ գտնուեցան Կլէնտէյլ Քաղաքի Քաղաքապետական խորհուրդի շաբաթական ժողովին, ուր պարզեցին ցարդ մշակուած ծրագիրը:*

*Ծանօթանալով ծրագիրի մանրամասնութիւններուն, Քաղաքապետական Խորհուրդի բոլոր անդամները գնահատեցին ներկայացուած ծրագիրը:*

*Համահայկական սոյն թանգարան-յուշարձանի որպէս վայր քաղաքին կողմէ տրամադրուած է 1.7 արտավար (էյքըր) հողամաս: Յատակագիծը պատրաստուած է «Ալաճաճեան-Մարգուսի ճարտարապետներ» հիմնարկին կողմէ:*

*Թանգարանը կը նախատեսուի ըլլալ մշակութային կեդրոն մը: Նպատակ ունենալով հանրութեան ծանօթացնել ամերիկահայութեան պատմութիւնը եւ լուսարձակի տակ առնելու ԱՄՆի ցեղային ու մշակութային բազմազանութիւնը:*

*Թանգարանը պիտի ունենայ ցուցադրութեանց յատուկ տարածքներ, գրադարան, դասարաններ եւ ուսումնասիրութեանց կեդրոն մը: Պիտի կառուցուի նաեւ ցեղասպանութեան նուիրուած յուշարձան մը:*

*Յաւելեալ տեղեկութեանց համար այցելել՝ Armenian American Museum.org կայքը կամ դիմել (818) 586-4626 թիւին:*

## Էտ Ռոյս եւ Ատամ Շիֆ կոչ Կ'ընեն Ամերիկեան կառավարութեան՝ Աչք Չփակել Պաքուի Գործողութիւններուն

*Միացեալ Նահանգներու կառավարութիւնը պէտք չէ խուսափի հայ-ատրպէյճանական սահմանին եւ շփման գծին մարտեր հրահրելու համար Ատրպէյճանի հասցէին մեղադրանքներէն, որոնք կը հանգեցնեն անհատներու մահուան: Այս մասին յայտարարած է ԱՄՆ Քոնկրէսի Ներկայացուցիչներու Տան արտաքին յարաբերութիւններու յանձնաժողովի նախագահ Էտ Ռոյս՝ ելոյթ ունենալով ԼՂՀ անկախութեան 24-ամեակին նուիրուած միջոցառման ժամանակ:*

*Քոնկրէսականը կոչ ըրած է նաեւ ԵԱՀԿ Մինսկի խումբի ամերիկացի, ռուս ու ֆրանսացի համանախագահներուն, ճնշում գործադրել Ատրպէյճանի նկատմամբ, որու նպատակը Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան գօտիէն ներս հրադադարի ռեժիմի խախտումներու դէմ երաշխիքներու ապահովումն է:*

*Իր կարգին, Քոնկրէսական Ատամ Շիֆ, նոյն միջոցառման ընթացքին, անհանգստութիւն յայտնած է կապուած Ատրպէյճանի ակրեսիւ ու վտանգաւոր ռազմական գործողութիւններու , ինչպէս նաեւ ԱՄՆ-ի ներկայի քաղաքականութեան կապակցութեամբ «Ես նաեւ իմ անհանգստութիւնը կը յայտնեմ, որ ԱՄՆ-ի պատասխանը այդ գործողութիւններուն կեղծ հաւասարութեան նշան կը դնէ ատրպէյճանական ու հայկական գործողութիւններուն միջեւ: Եթէ մենք կը ձգտինք հակամարտութեան խաղաղ կարգաւորման, մենք չենք կրնար անտեսել Ատրպէյճանի ռազմատենչ հռետորութիւնն ու սադրիչ գործողութիւնները: Մեր լռութիւնը միայն կը խրախուսէ անոնց»,- շեշտած է Ատամ Շիֆ:*

## ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՄՈՒԼ

# Ամէն ինչ նոր է սկսւում

*ՀԱՅԿԱԶՆ ՂԱՀՐԻՅԵԱՆ*

*Սահմանադրութեան հանրաքուէի կենտրոնական յանձնաժողովը ամփոփեց հանրաքուէի արդիւնքները՝ հանրաքուէն համարւում է կայացած, Սահմանադրութեան փոփոխութիւնները՝ ընդունուած: Իհարկէ, այլ որոշում պէտք էլ չէր սպասել, եւ ոչ ոք չէր էլ սպասում:*

*Եւ այսպէս, Հայաստանում տեղի է ունեցել յեղափոխութիւն, եւ այդ յեղափոխութիւնը կատարուել է «վերեւից»: Յեղափոխութիւն նշանակում է կարգի փոփոխութիւն: Իշխանութիւնը փոխեց կառավարման կարգը, այն յարմարեցնելով իր կարիքներին եւ նոր մարտահրաւէրներին, որոնց առաջ կանգնել է իշխող համակարգը իշխանութեան «փոխանցման» հերթական փուլում: Այս տեսակէտից, իրականութիւնից հեռու չեն այն պնդումները, որ սա յեղաշրջում էր:*

*Յեղափոխութիւնը Հայաստանում հասունացել էր վաղուց: Ստեղծուել էր դասական յեղափոխական իրավիճակ՝ ներքեւներն այլեւս չէին կարող եւ չէին ուզում ապրել նախկին ձեւով, վերեւներն այլեւս չէին կարող կառավարել հին ձեւով: Երկիրը կանգնած է սոցիալ-տնտեսական փլուզման եզրին, լրջագոյն մարտահրաւէրներ են առաջացել անվտանգութեան եւ այլ ոլորտներում: Փլուզման եզրին էր իշխող համակարգը, քանի որ համակարգային «պայմանագիրը» դադարել էր գործել վերը թուարկուած գործօնների ազդեցութեան տակ:*

*Սակայն իշխանութիւնն այս հանգամանքը տեսնում եւ զգում էր բոլորից լաւ, բացի այդ, լաւ էր պատկերացնում այդ ուղղութեամբ իր անելիքը: Այդ պատճառով էլ ձեռնամուխ եղաւ կառավարման նոր կարգի՝ համակարգային նոր պայմանագրի ու խաղի նոր կանոնների ընդունմանը:*

*Սակայն, ի տարբերութիւն նախորդ փուլերի, երբ զուգահեռ գործում էր երկու պայմանագիր՝ հանրային-պետական՝ ձեւականօրէն, ու համակարգայինը, իշխանութիւնն այս անգամ գնաց արմատական քայլի՝ «սինթեզեց» այս երկու պայմանագիրը, փորձելով բոլորին բերել լայն պայմանաւորուածութեան դաշտ: Այդ նոր պայմանագիրն էլ այսօր վաւերացրեց կեդրոնական յանձնաժողովը, որը կոչւում է նոր Սահմանադրութիւն:*

*Իշխանութիւնն այս գործընթացում կիրառեց թէ աւանդական, թէ նոր մեթոդներ, որոնց թւում էին «նպատակային» ընտրակաշառքը, լրացուցիչ ցուցակները, այսպէս կոչուած ինքնութեան քարտերով քուէարկութիւնը եւ այլն: Բացի այդ, կիրառուեց նաեւ իշխանական ու ընդդիմադիր կուսակցական համակարգի դերաբաշխումը, որը պէտք է ապահովեր գործընթացի «լեգիտիմութիւնը»: Սահմանադրութիւնն ընդունուեց այո-ի ու ոչ-ի կատարեալ թուաբանական ճշգրտութեամբ՝ առաջինն ապահովեց անհրաժեշտ քանակը, երկրորդը՝ «քուորումը»:*

*Հանրաքուէի արդիւնքները փաստացի ճանաչել են շահագրգիռ աշխարհաքաղաքական կեդրոնները՝ Ռուսաստանը, ԱՄՆ-ն ու Եւրամիութիւնը:*

*Հանրութիւնը հերթական անգամ միայնակ մնաց իշխանական-կուսակցական համակարգի դիմաց, սակայն նրան յաջողուեց մի բան, որը նախորդ համապետական քուէարկութիւններին տեղի չէր ունենում՝ հանրութիւնը իր եւ իշխանութեան արանքից հեռացրեց կուսակցութիւններին: Սա կարեւոր հանգամանք է հանրային հետագայ պ այքարի համար, երբ «միջնորդներն» այլեւս չեն կարողանալու նրան մոլորեցնել ու շեղել ճիշտ ճանապարհից: Այս անգամ որոշ չափով դա ստացուեց՝ հանրային տարբեր շրջանակների կողմից առաջարկւող բոյկոտի ու ապալեգիտիմացման կոչերն ընկալուեցին մասամբ:*

*Հայաստանում տեղի ունեցած «վերեւից» յեղափոխութիւնը չունի հանրային-պետական բովանդակութիւն եւ ուղղուած է իշխող համակարգի «վերաֆորմատաւորմանը» եւ նոր պայմաններում նրա «լեգիտիմացմանը»: Միեւնոյն ժամանակ, այս գործընթացում ի յայտ եկած որոշ երեւոյթներ ու հանգամանքներ, որքան էլ տարօրինակ հնչեն, նպաստաւոր են ապագայում այս յեղափոխութեանը հանրային բովանդակութիւն հաղորդելու տեսակէտից: Բանն այն է, որ նոր Սահմանադրութեան ընդունմամբ իշխող համակարգն, այնուամենայնիւ, չի լուծել իր բոլոր խնդիրները, աւելի ճիշտ՝ չկայ որեւէ երաշխիք, որ նրա ծրագրերն անխափան իրականացուելու են:*

*Հայաստանը ենթակայ է ներքին ու արտաքին դինամիկ զարգացումների ազդեցութեանը, որոնք պարբերաբար ճգնաժամերի պատճառ են դառնալու, եթէ համակարգը չգնայ արմատական փոփոխութիւնների ճանապարհով: Միւս ճանապարհը երկրում բռնութեան մակարդակի բարձրացումն է, որը սակայն նոր պայմաններում խիստ կասկածելի է եւ ունենալու է լիովին այլ էֆեկտ:*

*Այսպիսով, իրական յեղափոխութիւնն առջեւում է: Ո՞վ է այն իրականացնելու:*

*«ԼՐԱԳԻՐ»*

**Եւ այսպէս, Հայաստանում տեղի է ունեցել յեղափոխութիւն, եւ այդ յեղափոխութիւնը կատարուել է «վերեւից»: Յեղափոխութիւն նշանակում է կարգի փոփոխութիւն: Իշխանութիւնը փոխեց կառավարման կարգը, այն յարմարեցնելով իր կարիքներին**

Հրատարակելով հայաստանեան մամուլին մէջ լոյս տեսնող տարբեր յօդուածներ «ՄԱՍԻՍ» ամպայմանօրէն չի բաժներ հոն արտայայտուող բոլոր միտքերը

# Կեցցէ այն ընդդիմութիւնը, որ վաղն է գալու

*ԱՆԻ ՍԱՀԱԿԵԱՆ*

*Ամենասարսափելին այս օրերին այն է, որ հանդերձեալ աշխարհ գնացած ընդդիմութիւնը շարունակում է պնդել իր գոյութեան մասին եւ ժողովրդի առաջ «հերոս» երեւալ: Կիրակի օրը կայացած սահմանադրական հանրաքուէի արդիւնքում, ըստ պաշտօնական տուեալների, մօտ կէս միլիոն քաղաքացիներ «Ոչ» քուէարկեցին: Այդքան քաղաքացի իրականում «Ոչ» էր ասել ոչ թէ՝ Սահմանադրութեանը, այլ՝ այն ներկայացրած իշխանութեանը: Այսինքն՝ Հայաստանում, ամենանուազագոյն հաշուարկով, այդքան քաղաքացի դէմ է իշխանութեանը, կամ որ նոյնն է՝ ընդդիմադիր է: Փողոցում այս օրերին ծաւալուած բողոքի ակցիաների ժամանակ այդ ցուցանիշը մէկ տոկոսի արտացոլում չի գտնում՝ փաստելով՝ հրապարակը զաւթած ընդդիմադիր կուսակցութիւնների՝ ՀԱԿ, Ժառանգութիւն, Նկատմամբ անվստահութիւնը, աւելորդ է խօսել «ֆէյք» ընդդիմադիրների մասին, որոնք աջակիցն էին սահմանադրական փոփոխութիւնների: Բայց այս ամէնը չի խանգարում քաղաքական խմբակների ներկայացուցիչներին ճոռոմ-ճոռոմ յայտարարութիւններ անելու ու ժողովրդի անունից տեսակէտ յայտնելու համար:*

*Ամենայամառն, ինչ խօսք, ՀԱԿն է, ով իրեն համարում է երկրում գոյութիւն ունեցող ընդդիմադիր զանգուածի տէր ու տնօրէնը ու շարունակում է նոյնպիսի ինքնավստահութեամբ յայտարարութիւններ անել մի դէպքում, երբ հանրաքուէն վերջնականապէս ապացուցեց, որ նման ուժ առհասարակ գոյութիւն չունի «Հայաստանի պատմութեան մէջ աւելի խայտառակ քուէարկութիւն չի եղել, եւ օրինախախտումների տեսակէտից աւելին արձանագրուած հանրաքուէ մենք նոյնպէս չենք ունեցել»,- յայտարարել է Լեւոն Զուրաբեանը՝ կեղծիքների յստակ թիւ մատնանշելով 485 հազարը:*

*Մինչեւ հանրաքուէն Զուրաբեանն ու նրա թիմակիցները պնդում էին, որ ՀԱԿ-ն ունի բաւարար ռեսուրսներ ընտրական յանձնաժողովներում ներկայանալու եւ ընդդիմութեան ձայները պահելու համար: Իհարկէ, բոլորը, նախ եւ առաջ այս յայտարարութեան հեղինակները հասկանում էին, որ դա այդպէս չէ, այլապէս մինչեւ հանրաքուէն զուգահեռ յայտարարութիւններ չէին անի հակառակի մասին, որ իշխանութիւնը կեղծելու է կէս միլիոնից աւելի քուէ: ՀԱԿ-ից կը հակադարձեն, որ ունեցել են, բայց իշխանութեան դէմ ոչինչ անել հնարաւոր չէ, այդ դէպքում ինչ նպատակ է հետապնդում հանրաքուէից յետոյ՝ երէկ արուած յայտարարութիւնն այն մասին, որ ՀԱԿ-ը յայտարարում է «արդարութեան բանակի» ստեղծման գործընթաց, բոլոր նրանք, ովքեր ցանկանում են ազատագրուել ռեժիմից, պէտք է կամաւոր գրուեն այդ բանակին ու յաջորդ ընտրութիւններին պայքարել ընտրակեղծարարների դէմ:*

*Րաֆֆի Յովհաննիսեանի քաղաքական վախճանը կայացել է դեռ 2013-ին եւ ինչպէս նա է իշխանութիւններին մեղադրում հանդուցեալ աշխարհի օգնութեամբ հանրաքուէն կեղծելու մէջ, այնպէս էլ իշխանութիւններն են յայտարարում, որ այդ աշխարհի ներկայացուցիչների յայտարարութիւններն իրենք լուրջ չեն ընդունում:*

*Ընդդիմադիր կոչւող ՀՅԴ-ն նոյնպէս վաղուց իր երգը երգել է ու հիմա անհամբերութեամբ սպասում է ծափերի ու ծաղիկների: Դէ, իսկ ԲՀԿ-ին այսուհետ կարելի է դուրս հանել կուսակցութիւնների շարքերից եւ տեղաւորել հասարակական կազմակերպութիւնների, աւելի ճիշդ՝ բարեգործական ընկերութիւնների շարքերում: Ախ ԲՀԿ խմբակցութեան պատգամաւոր Միքայէլ Մելքումեանը Ախ ճեպազրոյցների ժամանակ յայտարարել է, որ ԲՀԿ-ն ինքնաբաւ կուսակցութիւն է եւ Այո-ի աջակցութեան դիմաց ոչինչ չի սպասում իշխանութիւններից:*

*Նա ասել է նաեւ, որ ԲՀԿ-ն երբեւիցէ քաղաքական առեւտուր չի անում եւ սա եղել է նրանց ծրագրային դրոյթը.«ԲՀԿ-ն եղել է կոալիցիա եւ դուրս է եկել, որովհետեւ եթէ քաղաքական որոշումների վրայ ազդեցութիւն չունես, իմաստ չունի մնալ կոալիցիայում: Որեւէ պարզեւատրում չենք ակնկալում, քանի որ թէ՛ ինքը, եւ թէ՛ ԲՀԿ-ն ինքնաբաւ են: Ի՞նչ պարգեւատրում, մենք մեր գործն ենք անում»:*

*Այնպէս որ ժամանակն է թերթել ընդդիմութեան պատմութեան այս էջը ակնկալելով.«Կեցցէ այն ընդդիմութիւնը, որ վաղն է գալու»:*

*«ՀԱՅԵԼԻ«*

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ՝
ՏՕՔԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆՃԵԱՆ

MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E:Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA $50.00, $100.00 (First Class)
Canada $125.00 (Air Mail)
Overseas $250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To MASSIS WEEKLY

## ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

# Շարմազանովն Անլուրջ է Համարում 480 Հազար Կեղծուած Քուէներու Պնդումները



Ազգային Ժողովի փոխնախագահ Էդուարդ Շարմազանով

*«Հանրութիւնը հանրաքուէի արդիւնքների հետ կապուած լուրջ կասկածներ չունի»,- պնդեց իշխող Հանրապետականի խօսնակ, Ազգային ժողովի փոխնախագահ Էդուարդ Շարմազանովը՝ ընդգծելով, թէ 480 հազար կեղծուած քուէների մասին ընդդիմութեան պնդումները պարզապէս անլուրջ են:*

*«Ազատութեան» հարցին՝ ինչո՞ւ իշխանութեանը չյաջողուեց ընտրական այնպիսի գործընթաց կազմակերպել, որի նկատմամբ հասարակութեան վստահութիւնը մի փոքր գոնէ կը բարձրանայ, ՀՀԿ խօսնակը պատասխանեց. - «Հարցը Թարս տեղից էք տալիս: Դուք պէտք է ասէք՝ իսկ ինչո՞ւ ընդդիմութեանը չյաջողուեց փաստարկներ ներկայացնել: Ասելով չի՝ չի կարելի այդքան անլրջացնել ամէն ինչ: Հայաստանի Հանրապետութիւնում նոյնիսկ Տէր-Պետրոսեանի կառավարման տարիներին, երբ որ ասում էին՝ պոլի փայտ լինի, բայց ՀՀՇ-ից լինի, երբ որ կարեւոր էր ոչ թէ ով է ընտրում, այլ ինչպէս են հաշւում, նոյնիսկ այն ժամանակ չեմ կարծում, որ 500 հազար քուէ է կեղծուել: Հանրութեան մօտ լուրջ կասկածներ չկան արդիւնքի հետ կապուած: Բոլոր խախտումներով հանդերձ՝ մենք պէտք է նշենք, որ այս հանրաքուէն համապատասխանում էր Հայաստանի ստանձնած պարտաւորութիւններին»:*

*Մեր դիտարկմանը, թէ ընդդիմադիրների պնդմամբ՝ քվեաթերթիկներով պարկեր են փոխուել, Շարմազանովը հակադարձեց. - «Ես էլ կարող եմ պնդել, որ իրենք են փոխել: Ախր պնդելով չի: Ո՞վ է պնդում: Այդ պնդողը 6 ամսուայ մէջ 9 անգամ կարծիք է փոխել: Այսօր հաճախորդ են հանում մի կուսակցութեան, որի ղեկավարի հետեւից հերթ էին կանգնել, որ գնան: Հիմա ասում են՝ «Բարգաւաճ Հայաստան»-ը եւ Դաշնակցութիւնը հաճախորդ են: Բա եթէ հաճախորդ էր, ինչո՞ւ էիք Ծառուկեան Գագիկի հետեւից հերթ կանգնել, որ գնաք բարեւէք: Մի մասդ էլ Դաշնակցութեան հետ հրաշալի եռեակ կամ քառեակ էիք ասում: Իրենք էին ասում, չէ՞, իրենց շեֆն էր ասում՝ հրաշալի քառեակ: Բա էդ հրաշալի քառեակի հետ ի՞նչ եղաւ, հիմա արդէն դառան հաճախորդական երկեա՞կ:*

*Չի կարելի սեփական ձախողումները փաթաթել ուրիշի վզին: Ես նորմալ, ռացիոնալ մտածող մարդ եմ: Ես չեմ ասում՝ եղել է իդեալական հանրաքուէ: Ասում եմ՝ այո, միգուցէ եղել են խախտումներ, ես չեմ բացառում, բայց այդ խախտումների քանակը չի կարող ազդել հանրաքուէի արդիւնքների վրա»:*

# Հրապարակ. «Զինուած Խմբի Անդամները Ասել Են, Թէ Ով Է Իրենց «Թիկունքը» Եղել

*«Հրապարակ» թերթը գրում է. «Մեր տեղեկութիւններով՝ Նորք Մարաշում վնասազերծուած խմբի գործով նոր զարգացումներ են սպասւում: Այժմ կալանաւորուածների թիւը 26 է, առաջիկայում հնարաւոր է մի քանի հոգու խափանման միջոցը փոխուի, բայց չեն բացառւում նոր ձերբակալութիւններ:*

*Խմբի անդամներն իրենց ցուցմունքներում բազմաթիւ անուններ են տուել, նաեւ ասել են, թէ ով է իրենց «թիկունքը» եղել: Ուշագրաւ անուններ են նշել:*

*ԱԱԾ-ի մօտ կանգնած աղբիւրը յայտնեց, որ խմբի անդամների մեծ մասը չի իմացել, որ այդտեղ այդքան զէնք կայ: Նրանք տեւական ժամանակ հաւաքուել, «հայրենասիրական» հողի վրայ ժողովներ են արել, թէ ինչպէս փրկել երկիրը, սակայն մի մասն անտեղեակ է եղել զէնքի մասով: Բուն անելիքներին եւ մեխանիզմներին տիրապետել են քչերը, միայն գիտեն, որ պէտք է Դեկտեմբերի 1-ին «գրոհէին» մի քանի պետական կառոյցների վրայ, սպանէին երկրի առաջին դէմքերին, անմիջապէս եթեր հեռարձակուէր պատրաստած տեսանիւթը, որում պարագլուխ Արթուր Վարդանեանն իրեն հռչակելու էր նախագահ եւ նշէր անելիքները»:*

# ՀՀԿ-ում Քննարկում Են, Թէ Ինչպէս Են Կիսելու Պաշտօնները 2017-ից Յետոյ

*«Ժողովուրդ» օրաթերթը գրում է. ««Ժողովուրդ»-ի տեղեկութիւններով՝ ՀՀԿ-ում արդէն սկսել են քննարկել, թե Սահմանադրութեան փոփոխութիւնները ուժի մէջ մտնելուց յետոյ ինչպէս պէտք է կիսեն պաշտօնները, եւ որ ամենակարեւորն է՝ 17 թուականի խորհրդարանական ընտրութիւններից յետոյ ով ինչ ակնկալիքներ կարող է ունենալ:*

*ՀՀԿ-ում այս քննարկումների հիմնական պատճառը Սերժ Սարգսեանի այն յայտարարութիւնն է, ըստ որի՝ նա ծրագրում է դառնալ վարչապետ: Այս հանգամանքը յատկապէս մտահոգել է ՀՀ վարչապետ Յովիկ Աբրահամեանի թիմակիցներին: Ուստի բոլորը փորձում են իրենց համար պարզել, թէ 2017-ի ԱԺ ընտրութիւններից յետոյ իրենք ինչ կարգավիճակ են ունենալու:*

*ԱԺ փոխնախագահ Էդուարդ Շարմազանովը «Ժողովուրդ»-ի հետ զրոյցում այս առնչութեամբ ասաց. «Մենք մեր ներսում իրականացնում ենք նախագահի ծրագրերը, պէտք չէ մեր կուսակցութեան ներսում սեւ կատուներ փնտռել, սեւ կատուներ չկան, սեւ կատուներ այն մարդկանց ուսերին են, ովքեր ուզում են ՀՀԿ-ում ինչ-որ մութ բաներ փնտռել»:*

# Իրաւապաշտպանները Իմիտացիոն Պրոցէս Են Համարում Ընտրախախտումների Քննութիւնը



Ընտրութիւններու օրը քաղաքացի մը ցուցակի վրայ կը փնտռէ իր անունը

*Իրաւապաշտպաններին ու փաստաբաններին արդէն չի զարմացնում, որ չնայած բազմաթիւ ահազանգներին՝ հանրաքուէից մէկ շաբաթ անց ընդամէնը մէկ կասկածեալ կայ: Ասում են՝ գրեթէ նոյն պատկերն է համապետական իւրաքանչիւր քուէարկութիւնից յետոյ:*

*«Այս ամէն ինչը աւելի շատ նման է իմիտացիոն պրոցէսի, քան ինչ-որ իրական գործընթացի: Լաւագոյն դէպքում աւարտուելու է մէկ կամ երկամսեայ կալանքներով, կամ, եթէ ասենք շատ մարդ պատժելու լինեն, համաներմամբ է աւարտուելու», - ասում է փաստաբան Երուանդ Վարոսեանը:*

*Այնուամենայնիւ, այս հանրաքուէն առանձնանում էր, աւելացնում է իրաւապաշտպան Ժաննա Ալեքսանեանը. ընտրակեղծիքները անթաքոյց էին, թէեւ իշխող կուսակցութիւնը յայտարարում էր, թէ իրենց կեղծուած հանրաքուէ պէտք չէ. - «Այնքան վստահ են իրենք՝ միշտ կեղծել են եւ կը կեղծեն: Այս տեսագրութիւնները, ձայնագրութիւնները... դա ոչ մի նշանակութիւն չի կարող ունենալ: Այսինքն՝ այդ թողտուութեան աստիճանը այնքան մեծ է՝ հանրութեան հետ բացարձակապէս հաշուի չնստելը, որ այդպէս փնթի են իրենք կեղծել, ջանքեր չէին ներդրել, որ գնային, ասենք, տանը այդ գումարը բաժանէին եւ այլն»:*

*Երուանդ Վարոսեանը եւս վստահ է, որ իրական գործընթացի արդիւնքում ազատազրկմամբ պատժուողներ չեն լինելու, ինչպէս չեն եղել նախորդ ընտրութիւնների ժամանակ. - «Սա ոչ մի հետեւանք չի ունենալու այն առումով, որ երբ գա յաջորդ ընտրական փուլը, չի լինելու իրավիճակ, որ ընտրութիւնները կեղծելու նպատակ ունեցող անձինք վախենան, ասեն՝ տեսէք՝ նախորդ անգամ այսպէս բոլոր կեղծարարները կամ նրանց մի մասը պատժուեցին»:*

*Ժաննա Ալեքսանեանը յիշեցնում է հանրաքուէին յաջորդած Սերժ Սարգսեանի ելոյթը, երբ նախագահն ասել էր, որ իրաւասու մարմինները պէտք է օրէնքի տառին եւ ոգուն համապատասխան գնահատականներ տան խախտումների վերաբերեալ բոլոր ահազանգներին:*

*«Ձեւական բնոյթ է կրում այդ յայտարարութիւնը, իսկ իրաւապահ մարմիններն էլ արդէն այդ ցուցումը գիտեն՝ արդէն այնքա՞ն ընտրութիւններ են կեղծուել», - ասում է նա:*

*Այսօր էլ հրաւիրուած ասուլիսին Քննչական կոմիտէի նախագահի տեղակալն է շեշտել՝ տեղամասերի 92 տոկոսից ընդհանրապէս որեւէ ահազանգ չեն ստացել:*

*Փաստաբան Երուանդ Վարոսեանի կարծիքով՝ միայն այս յայտարարութիւնը կասկածի հիմքեր է տալիս, որ Քննչական կոմիտէն ստանձնել է ոչ թէ իրաւապահ, այլ քաղաքական գործառոյթ:*

# «Նոր Հայաստանը» Մտադիր Է Ուղղել Իր Սխալները

*«Նոր Հայաստան» հանրային փրկութեան ճակատը մտադիր է վերանայել մարտավարութիւնը, գտնել սխալները, որոնց պատճառով տեղի չունեցաւ հանրութեան մոբիլիզացիա, եւ ուղղել դրանք: Ազատութեան հրապարակում տեղի ունեցած բացօթեայ ասուլիսի ժամանակ յայտարարեց «Նոր Հայաստանի» առաջնորդ Ժիրայր Սեფիլեանը:*

*«Մենք, ի տարբերութիւն 20-ամեայ աւանդական ընդդիմութեան մարտավարութեանը, չենք եզրափակելու մեր հանրահաւաքային պայքարը յայտնի տեքստով, որ մենք արեցինք, ժողովուրդը չեկաւ, եւ ինչ անենք՝ էլ բան չենք կարող անել: Մենք երբեք մեղքը մեր ժողովրդի վրայ չենք գցելու», - յայտարարեց նա:*

*Առանց յաւելեալ մանրամասների՝ Սեփիլեանը պնդեց, թէ առաջիկայում, պայքարը գուցէ ժամանակաւոր ընդմիջէն, բայց դա դադար չի լինելու: Վստահեցրեց, թէ ժողովրդին իրենց շուրջը հաւաքագրելու տարբեր մարտավարութիւններ փորձելով՝ հասնելու են իրենց նպատակին. - «Եթէ մեզ այսօր պէտք եղած չափով չի յաջողւում մոբիլիզացիա իրականացնել, դա նշանակում է՝ մեր մարտավարութիւնում առկայ են սխալներ, խոււթեր, ուղղումներ, եւ օր առաջ, ես համոզուած եմ, որ մենք գտնելու ենք այդ ուղղումները եւ վերջում գտնելու ենք այն բանալին, որ մոբիլիզացնելու է մեր ժողովրդին»:*

*Պատասխանելով «Ազատութեան» հարցին, Սեփիլեանը նշեց՝ եթէ իրենց չյաջողուեց կասեցնել հանրաքուէն կամ դրան չյաջորդեցին մարդաշատ հանրահաւաքներ, չի նշանակում, որ իրենց պայքարն անիմաստ էր: Պնդեց՝ «Նոր Հայաստանը» նոր իրավիճակ է ստեղծել քաղաքական դաշտում:*

*«Այսօր Հայաստանում ձեւաւորուել է ընդդիմադիր մի բեւեռ, որը հակառակորդը՝ նկատի ունեմ իշխանութիւններին, չունի որեւէ լծակ՝ ազդելու այս ուժին: Երկար ժամանակ է՝ բացակայում էր այսպիսի բեւեռը երկրի ներսում: Իմ կարծիքն է: Եւ երբ երկրի ներսում լինում է անվերահսկելի, նաեւ անկանխատեսելի բեւեռ, մեր երկրում խաղացող աշխարհաքաղաքական ուժերը չեն կարող այդ փաստի հետ հաշուի չնստել», - նշեց Սեփիլեանը:*

## ԼՈՒՐԵՐ

### 11 Ամսում Կողմերն Ունեցել Են 53 Զինուորական Եւ 3 Քաղաքացիական Կորուստ

Հայ-ատրպէյճանական սահմանին Դեկտեմբերի 4-ից ի վեր լարուածութիւնը մեծացել է, սակայն իրավիճակը հեռու է պատերազմականից: Ատրպէյճանը վստահ չէ որ կը յաղթի հայկական կողմին, բացի այդ՝ նրան չի յաջողուի միջազգային հանրութեանը համոզել պատերազմի լեգիտիմութիւնը:

«Ատրպէյճանը զսպուած է խոշոր մասշտաբի ռազմական գործողութիւններ իրականացնելու հնարաւորութեամբ, բայց եւ միւս կողմից ակնյայտօրէն Ատրպէյճանը չի հրաժարուել մէկ այլ ռազմավարութիւնից, դա Հայաստանին մեծ կորուստներ պատճառելն է: Կարծէք թէ Ալիեւի հիմնական անելիքը դարձել է ուղղակի հասարակութեանը շատ մեծ ցաւ պատճառել»,-«Ա1+»-ի հետ զրոյցում նշում է քաղաքագէտ Ստեփան Սաֆարեանը:

Վերջին 10 օրերին հայ-ատրպէյճանական սահմանագօտում իրավիճակի լարման հետեւանքով կողմերն ունեցել են 6 զոհ:

2015-ը սահմանում ամենալարուածներից է հրադադարի հաստատումից ի վեր: Տարածաշրջանային հետազօտութիւնների կենտրոնի տուեալներով՝ եթէ 2003 թուականին հակամարտութեան կողմերն ունեցել են 19 զինուորի կորուստ, 2014-ին այդ թիւը եղել է 64 զինուոր եւ 8 քաղաքացիական անձ: Այս տարուայ 11 ամսուայ ընթացքում հայ-ատրպէյճանական կողմերն ունեցել են առնուազն 53 զինուորականի եւ եւս 3 քաղաքացիականի կորուստ:

Լարելով իրավիճակը չփման գծում՝ Իլհամ Ալիեւն ուզում է Սերժ Սարգսեանի հետ հանդիպումից առաջ աւելի ամուր դիրք ստանալ: Քաղաքագէտ Շուշան Խաթլամաջեանի խօսքերով՝ Ատրպէյճանը շատ է ոգեւորուել նրանից, ինչ տիրում է Թուրքիայում: «Նա համարում է ,որ հիմա աւելի մեծ քաղաքական կապիտալով է ներկայանում միջազգային ասպարէզում»:

Սակայն քիչ հաւանական է, որ Թուրքիան փորձի ակտիւ ռազմական գործողութիւններ հրահրել Ռուսաստանի ազդեցութեան գօտի համարուող Անդրկովկասում: Ռուսաստանը դա թոյլ չի տայ: Այս համատեքստում պարոն Սաֆարեանը նշում է.

«Ռուսաստանը ապակայունացման ցանկացած գործողութիւն դիտելու է որպէս իր շահերին ուղղուած քայլ եւ դա մենք լսում ենք ռուս փորձագէտների շուրթերից»: Առաջիկայում Ղարաբաղեան կոնֆլիկտի լուծում քիչ հաւանական է: Արտակարգ եւ լիազօր դեսպան Արման Նաւասարդեանը յոյս չունի նախագահների առաջիկայ հանդիպումից:

«Դա բացարձակապէս ոչինչ չի տալու խնդրի լուծման վերաբերեալ, միգուցէ ծանր սպառազինութիւնների հետքաշում լինի»,- շեշտեց Արման Նաւասարդեանը:

Ստեփան Սաֆարեանի համոզմամբ՝ լաւագոյնը, ինչ կարող է լինել Հայաստանի համար առաջիկայ հանդիպման արդիւնքում՝ Ատրպէյճանին բանակցութիւնների սեղանի շուրջ բերելն է, ինչը փորձելու են անել նաեւ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները:

### Չեխիայի Նախագահը՝ Ընդդէմ ԵՄ-ին Թուրքիայի Անդամակցութեան



Չեխիայի նախագահ Միլոշ Զեման

Չեխիայի նախագահ Միլոշ Զեման կտրականապէս դէմ է Թուրքիայի՝ Եւրամիութեանն անդամակցելուն: Այս մասին նա յայտարարեց երկրի հիւսիսային շրջաններ կատարած այցի ընթացքում:

Չեխիայի նախագահը, սակայն, խոստովանում էր, որ մի քանի տարի առաջ Եւրամիութեան անդամ պետութիւնների ղեկավարների շրջանում Թուրքիայի անդամակցութեանը հակադրուողների թիւն աւելի մեծ էր:

«Եւրամիութեանը Թուրքիայի անդամակցութեան հարցի շուրջ ոչ վաղ անցեալում որոշակի հաւասարակշռութիւն կար: Ֆրանսիայի նախկին նախագահ Սարկոզին ոգեւորուած չէր այդ հեռանկարով: Գերմանիայի դաշնային կանցլեր Անգելա Մերկելը ընդամէնը մի քանի տարի առաջ խօսում էր Թուրքիայի հետ «ռազմավարական գործընկերութեան» մասին՝ այդ արտայայտութիւնը Թուրքիայի լիիրաւ անդամակցութիւնը մերժելու իւրատեսակ ձեւ էր», - նշում էր Զեմանը, նկատելով, սակայն, որ փախստականների ճգնաժամը փոխեց նաեւ եւրոպացի ղեկավարների զգալի մասի վերաբերմունքն Անկարայի նկատմամբ:

«Թուրքիային Եւրամիութեան կողմից առաջարկուեց աւելի քան երեք միլիարդ եւրօ՝ իր տարածքում գտնուող փախստականներին տեղաւորելու համար: Այդ գումարի զգալի մասը՝ մօտ 700 միլիոն չեխական կրօն, մուծելու է մեր երկիրը: Սա ինձ յիշեցրեց Հռոմէական կայսրութեան անկմանը նախորդած ժամանակաշրջանը, երբ հռոմէացիները վճարում էին բարբարոսներին, որպէսզի նրանք զերծ մնան իրենց տարածք մուտք գործելուց», - յայտարարում էր Չեխիայի նախագահը՝ խորհուրդ տալով հայրենակիցներին. - «Թուրքիայի հարցում հարկաւոր է զգուշաւոր մօտեցում որդեգրել»:

«Ենթադրում եմ, որ իմ արտաբերած այս մի քանի նախադասութեան համար առաջիկայ օրերին Թուրքիայի դեսպանը բողոքի նոտա կ՚ուղարկի նախագահական պալատ», - եզրափակելով իր ելոյթը՝ ասաց Միլոշ Զեմանը:

www.massisweekly.com

### Հասանովը Սպառնում Է «Աւելի Կործանարար Հարուածներով»



Ատրպէյճանի պաշտպանութեան նախարար Զաքիր Հասանով

«Մեր առջեւ կանգնած է գլխաւոր եւ սուրբ նպատակ՝ ազատագրել օկուպացուած տարածքները», - յայտարարել է Ատրպէյճանի պաշտպանութեան նախարար Զաքիր Հասանովը:

Ելոյթ ունենալով զօրամասի բացման ժամանակ՝ նա վստահեցրել է, թէ ատրպէյճանական զինուած ուժերը «կործանարար հարուածներ են հասցնում թշնամուն», ապա շարունակել՝ «հետագայում աւելի կործանարար հարուածներ» են հասցնելու:

«Մեր նպատակն է թշնամուն կործանարար հարուածներ հասցնել եւ քշել նրան մեր հողերից: Մենք այժմ դա անելու ենք աւելի կոշտ: Որքան արագ օկուպանտները հասկանան, որ պէտք է կարճ ժամկէտներում լքեն մեր հողերը, այնքան քիչ կորուստներ կ՚ունենան: Մեր թշնամիները պէտք է իմանան եւ հասկանան դա», - APA լրատուական գործակալութեան փոխանցմամբ՝ ասել է Հասանովը:

Հայկական կողմը շեշտում է, որ լարուածութիւն առաջացնելով հայկական զօրքերի հետ շփման գծում՝ Ատրպէյճանը իր նպատակին չի հասնում, իր մարտական խնդիրը չի կատարում: «Աւելին՝ ամէն մի հերթական փուլից յետոյ ինքը վատ դրութեան մէջ է յայտնուել, կորուստներ է կրել, խնդիրներ է ունեցել սեփական հանրութեան հետ, իր նպատակադրած թիրախային խմբերի վրայ համապատասխան ազդեցութիւնը չի երեւացել, հետեւաբար՝ փորձել է երեւի աւելի մեծ սանձազերծումներ անել, որ ի վերջոյ իր նպատակին հասնի», - օրերս «Ազատութեան» հետ զրոյցում մասնաւորապէս յայտարարել է Հայաստանի պաշտպանութեան նախարարի խօսնակ Արծրուն Յովհաննիսեանը:

### Դինքի Սպանութեան Գործով Նախկին Պաշտօնեաների Դէմ Հայցը Ուղարկուեց Դատարան



Տրապիզոնի նահանգի նախկին ոստիկանապետ Ռամազան Աքուրէք

Հրանդ Դինքի սպանութեան գործով նախկին պետական պաշտօնեաների, նախկին բարձրաստիճան ոստիկանների դէմ մեղադրանքների հայցը ուղարկուել է Ստամբուլի քրէական բարձր դատարան: Այդ մասին տեղեկացնում է «Ակօս» թերթը:

Այս միջնորդութիւնը երկու անգամ Ստամբուլի դատախազութիւնը չէր ընդունել, հետ էր ուղարկել, բայց Դեկտեմբերի 9-ին հայցը հաստատուել է, եւ հիմա 15 օրուայ ընթացքում Ստամբուլի 14-րդ քրէական ծանր յանցագործութիւնների դատարանը պէտք է որոշում կայացնի՝ գործը վարոյթ ընդունել կամ ոչ:

Today's Zaman-ը յստակեցնում է, որ այս դատարանը լսում է ահաբեկչական մեղադրանքներով ծանր յանցագործութիւնների գործերը:

Դատախազ Գյոքալփ Քյոքչուի պատրաստած միջնորդութեամբ պահանջւում է քրէական պատասխանատուութեան ենթարկել 26 անձանց, որոնք Դինքի սպանութեան ժամանակ բարձր պաշտօններ են զբաղեցրել ոստիկանութեան համակարգում, այդ թւում՝ Տրապիզոնի քրէական հետախուզութեան նախկին պետ Էնգին Դինչին, Տրապիզոնի նահանգի նախկին ոստիկանապետ Ռամազան Աքուրէքին, Ստամբուլի ոստիկանութեան քրէական հետախուզութեան նախկին ղեկավար Ահմեթ Իլհան Գիւլերին: Եթէ դատարանը ընդունի հայցը, յանցաւոր անփութութեան մեղադրանքով նրանց 20-25 տարուայ ազատազրկում կը սպառնայ:

Եւս մի քանի նախկին բարձրաստիճան ոստիկաններ կարող են դատապարտուել պաշտօնեական դիրքը չարաշահելու մեղադրանքներով:

### Ռուսաստանցիները Ալիեւին աւելի են վստահում, քան Սարգսեանին

Ռուսաստանցիների շրջանում Սերժ Սարգսեանի վարկանիշն աւելի ցածր է, քան Իլհամ Ալիեւինը: Սա են վկայում օրերս Ռուսաստանի առաջատար սոցիոլոգիական ծառայութիւններից մէկի՝ «Հանրային կարծիքի ուսումնասիրութեան համառուսաստանեան կենտրոնի» հրապարակած տուեալները:

«ԱՊՀ-ի պետութիւնների ղեկավարներից ո՞ւմ էք վստահում», - այս հարցին պատասխանելով՝ ռուսաստանցիների միայն 5 տոկոսն է նշել Հայաստանի նախագահի անունը: Ատրպէյճանի նախագահի վարկանիշը հարցուած ռուսաստանցիների շրջանում փոքր-ինչ աւելի բարձր է՝ 6 տոկոս: Միանձնեայ առաջատարները Բելառուսի եւ Ղազախստանի նախագահներն են. Ալեքսանդր Լուկաշենկոյին, օրինակ, վստահում է հարցուած ռուսաստանցիների 63 տոկոսը: Ինչպէս եւ կարելի էր ակնկալել, ռուսաստանցիները ամենաքիչը վստահում են Ուկրաինայի նախագահ Պետրօ Պորոշենկոյին՝ նրա վարկանիշը 1 տոկոսից էլ ցածր է:

## ԶՈՀՐԱՊ ՄՆԱՑԱԿԱՆԵԱՆ. ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԺԽՏՈՒՄՆ ՈՒ ԱՏԵԼՈՒԹԻՒՆ ՍԵՐՄԱՆՈՂ ՔԱՐՈԶՉՈՒԹԻՒՆԸ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԱՆՅԱՊԱՂ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ ՊԱՀԱՆՋՈՂ ՆՇԱՆՆԵՐ ԵՆ





*Դեկտեմբերի 9-ին ՄԱԿ-ի կեդրոնակայանում տեղի ունեցաւ Ցեղասպանութեան յանցագործութեան զոհերի յիշատակի եւ արժանապատուութեան եւ այդ յանցագործութեան կանխարգելման միջազգային օրուան նուիրուած բարձրաստիճան հանդիպում, որը կազմակերպուել էր ՄԱԿ-ում ՀՀ մշտական ներկայացուցչութեան, Գլխաւոր Ասամբլիայի նախագահի եւ Ցեղասպանութեան կանխարգելման ու պաշտպանելու պատասխանատուութեան գրասենեակի կողմից:*

*Միջոցառումը, որին ներկայ էին ՄԱԿ անդամ-պետութիւնների, դիտորդ կազմակերպութիւնների, վերլուծական կեդրոնների, քաղաքացիական հասարակութեան, կրթական հաստատութիւնների, ինչպէս նաեւ հայ համայնքի բազմաթիւ ներկայացուցիչներ, մեկնարկեց մէկ րոպէ լռութեամբ՝ յարգանքի տուրք մատուցելով Ցեղասպանութեան զոհերի յիշատակին: Բացման խօսքով հանդէս եկան ՄԱԿ-ի ԳԱ նախագահ Մոգենս Լիկեթոֆտը, Գլխաւոր քարտուղարի տեղակալ Յան Էլիասոնը եւ ՀՀ Մշտական ներկայացուցիչ Զոհրապ Մնացականեանը, որպէս հիմնական բանախօս հանդէս եկաւ Ցեղասպանութեան կանխարգելման հարցով ՄԱԿ-ի ԳՔ յատուկ խորհրդական Ադամա Դիենգը: Քննարկման բանախօսներն էին Անցումային արդարադատութեան միջազգային կեդրոնի նախագահ Դեւիթ Թոլբերտը, ճշմարտութեան, արդարադատութեան, փոխհատուցման խթանման եւ յանցանքի չկրկնման հարցերով յատուկ զեկուցող Պաբլո դէ Գրեֆը, ինչպէս նաեւ Ցեղասպանագէտների միջազգային ասոցիացիայի առաջին փոխնախագահ Էլիզա ֆոն Հոյդեն-Ֆորժին: Ելոյթներով հանդէս եկան նաեւ տարածաշրջանային խմբերում նախագահող անդամ-երկրների մշտական ներկայացուցիչները:*

*ՀՀ մշտական ներկայացուցիչ, դեսպան Զոհրապ Մնացականեանն իր ելոյթում նշեց, որ ԳԱ 69/323 բանաձեւով հռչակուած միջազգային օրը կոչ է անում հաւաքական պատասխանատուութիւն դրսեւորել ցեղասպանութեան ոճրագործութեան զոհերի առջեւ: Նա վերահաստատեց Հայաստանի յանձնառութիւնը՝ աջակցելու 1948թ. Ցեղասպանութեան յանցագործութեան կանխարգելման ու պատժի մասին ՄԱԿ-ի կոնուենցիայի նշանակութեան ամրապնդմանն ու կանխարգելման համակարգի համար կուռ հիմքեր կառուցելուն ուղղուած միջազգային ջանքերին: Այս կապակցութեամբ դեսպանի կողմից յիշատակուեց 2015թ. Հայաստանի կողմից նախաձեռնուած եւ կոնսենսուսով ընդունուած ԳԱ եւ ՄԻԽ համապատասխան բանաձեւերը՝ երախտագիտութիւն յայտնելով բոլոր գործընկերներին ցուցաբերուած աջակցութեան համար: ՀՀ դեսպանն իր ելոյթում անդրադարձաւ նաեւ 2015թ. Ապրիլին Երեւանում անցկացուած «Ընդդէմ Ցեղասպանութեան յանցագործութեան» խորագրով գլոպալ ֆորումին:*

*Անդրադառնալով ԳԱ նախագահի եւ ԳՔ տեղակալի՝ աւելի վաղ հնչեցուած խօսքերին, թէ Ցեղասպանութեան զոհերի յիշատակը յարգելու միջոցով միջազգային հանրութիւնը վերահաստատում է այդ սարսափելի ոճրագործութիւնը կանխելու իր յանձնառութիւնը, դեսպան Մնացականեանն ընդգծեց, որ միջազգային օրը հնարաւորութիւն է տալիս յարգանքի տուրք մատուցել անցեալում մարդկութեան կողմից ցուցաբերուած անգործութեան զոհերի արժանապատուութեան յիշատակին: ՀՀ դեսպանը յաւելեց, որ օրուայ խորհուրդը նշանաւորւում է ոչ միայն միջազգային իրաւունքի տեսակէտից կարեւորագոյն փաստաթղթի ընդունման պատմական իրադարձութեամբ, այլ նաեւ յանցագործութեանը մարտահրաւէր նետելու եւ ի վերջոյ այն կասեցնելու քաղաքական, իրաւական ու բարոյական համընդհանուր պատասխանատուութեան պատգամով՝ որպէս «բարոյական եւ քաղաքական հրամայական»:*

*«Նրանք, ովքեր դասեր չեն քաղում պատմութիւնից, դատապարտուած են այն կրկնելուն», - յիշեցրեց Զոհրապ Մնացականեանը՝ ընդգծելով ցեղասպանական միտումները արմատախիլ անելու համար անցեալի ոճրագործութիւնների խորքային պատճառներն ուսումնասիրելու կարեւորութիւնը: Ըստ դեսպանի, «խտրականութեան իւրաքանչիւր դրսեւորում, իրաւունքի ամէն մի խախտում վտանգի տակ է դնում խոցելի խմբերին, իսկ բացառողական գաղափարախօսութիւնը, անպատժելիութեան մթնոլորտը, Ցեղասպանութեան ժխտումն ու ատելութիւն սերմանող քարոզչութիւնը, ինչպէս նաեւ բռնութեան հրահրումը վաղ նախազգուշացման հենց այն նշաններն են, որոնք կանխարգելման անյապաղ գործողութիւններ են պահանջում»:*

*Օրուայ բանախօսներն անդրադարձան Ցեղասպանութեան պատճառներին ու հետեւանքներին, ցեղասպանական դրսեւորումների վերլուծութեանն ու երկարաժամկէտ կանխարգելման հետ դրանց առնչութեանը, Ցեղասպանութեան զոհերի յիշատակի եւ արժանապատուութեան կարեւորութեանը, զոհերի իրաւունքի պաշտպանութեան միջոցներին ու փոխհատուցմանը, չկրկնուելու երաշխիքներին ու հաշուետուողականութեանը, ցեղասպանութեան եւ մարդու իրաւունքների կոպտագոյն այլ խախտումների փոխկապակցուածութեանը, ոճրագործութեան կանխարգելմանն ու պատժին:*

## ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆՉԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԿՈՉ Կ'ՈՒՂՂԷ ՔԷՄԲ ԱՐՄԷՆ-Ի ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՎԵՐԱԴԱՐՁԻՆ



*Հոկտեմբեր 27, 2015-ին մասնակի արդարութիւն մը իրականացուեցաւ երբ Իսթանպուլի Թուզլա շրջանին մէջ գտնուող Պոլսոյ Պատանեկան Տան Քէմբ Արմէն ամառնային ճամբարի կալուածին մէկ մասը վերադարձուեցաւ՝ իր օրինական տիրոջ՝ Կէտիկ Փաշայի Հայ Աւետարանական Եկեղեցիին:*

*Քէմբ Արմէն-ը տունն էր 1500-է աւելի որբերու, որոնց «տունդարձ»ը Անատոլուի խորերէն եւ հայեցի ու Քրիստոնէական դաստիարակութիւնը կը պարտինք Հրանդ Կիւզէլեան անուն հայ աւետարանական հերոսին: Հոն էր որ նահատակ Թղթակից Հրանդ Տինք եւ իր կինը՝ Ռաքէլ հանդիպած եւ ամուսնացած էին: Քէմբը Մայիս 2015ին քանդուելու իրավիճակին մէջ կը գտնուէր:*

*Ամերիկայի Հայ Աւետարանչական Ընկերակցութեան Տնօրէն՝ Զաւէն Խանճեան, վերջերս յատուկ նամակով մը, ուղղուած Թուրքիոյ Հանրապետութեան Վարչապետ՝ Տիար Ահմէդ Տաւութօղլուի, շնորհակալութիւն յայտնեց Կառավարութեան դրական միջամտութեան եւ դերին՝ Քէմբ Արմէն-ի մասնակի վերադարձին համար: Ապա Խանճեան կոչ ըրաւ Վարչապետին, կալուածի հողերու ամբողջական վերադարձին համար իր իրաւատիրոջ, զոր օրինաւոր կերպով գնած եւ ձեռք բերած էր Հայ Աւետարանական Եկեղեցին, եւ կառուցած զայն ճամբարի մանուկներու քրտնաջան աշխատանքով:*

## Միացեալ Նահանգները Կրնայ Պատժամիջոցներ Կիրառել

*Շարունակուած էջ 1-էն*

*տրամադրել ամերիկեան մուտքի վիզա, սառեցուեցան անոնց դրամատնային հաշիւները եւ այլն:*

*«Այս կրնայ կոշտ, բայց անհատական պատժամիջոցներու սկիզբը ըլլալ եւ կրնայ վերաբերիլ հայաստանեան օլիգարխներուն եւ իշխանութեան ներկայացուցիչներուն: Կը խորհիմ՝ գլխաւոր դատախազը պէտք է յատկապէս զգոյշ ըլլայ, եթէ պարզուի, որ բողոքները պատշաճ ընթացք չեն ունեցած: Ի վերջոյ, ժամանակն է վճարել նման՝ անընդունելի վարքագծի համար», - ըսած է Կիրակոսեան:*

*Հանրաքուէն յետոյ կատարուած այս արդէն երրորդ յայտարարութիւնն է, որ կոչ կ'ընէ Հայաստանի իշխանութիւններուն թափանցիկ հետաքննութիւն կատարել ընտրախախտումներուն վերաբերող արժանահաւատ հաղորդումներուն առնչութեամբ:*

*Նոյն բովանդակութեամբ երկու յայտարարութիւն տարածած էին Հայաստանի մօտ Եւրամիութեան պատուիրակութիւնը ու Եւրամիութեան անդամ երկիրներու դեսպանատուները:*

Ձեր Ծանուցումները Վստահեցէք
«Մասիս» Շաբաթաթերթին
T: (626) 797-7680 F: (626) 797-6863

# ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆԻ ՊԼԱՆՆԵՐԸ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՀԱՆՐԱՔՈՒԷԻՑ ՅԵՏՈՅ

*ԱՐՄԷՆ ԱՌԱՔԵԼԵԱՆ*

*Դեկտեմբերի 2-ին մի քանի հեռուստալրագրողների տուած հարցազրոյցում ՀՀ նախագահ Սերժ Սարգսեանը յայտարարեց, որ թէեւ չի հրաժարւում նոր Սահմանադրութեան ընդունումից յետոյ ՀՀ նախագահի, ԱԺ նախագահի եւ վարչապետի պաշտօններին չհաւակնելու մասին նախկինում արած յայտարարութիւններից, սակայն իր պլանների մասին կը խօսի 2017թ. կայանալիք խորհրդարանական ընտրութիւններից յետոյ: «Ես ինչու՞ եմ ասում 2017թ.-ից յետոյ, որովհետեւ լրջօրէն խօսել վարչապետ դառնալու կամ կառավարութիւն ձեւաւորելու մասին կարելի է այն ժամանակ, երբ դու խորհրդարանում մեծամասնութիւն ունես: Իսկ եթէ խորհրդարանում մեծամասնութիւն չունես, Սահմանադրութիւնը փոխուած է, փոխուած չէ՝ ինչպէ՞ս պէտք է վարչապետ աշխատես, ինչպէ՞ս պէտք է վարչապետ դառնաս: Չկայ այդ հնարաւորութիւնը»,- ասել էր նա՝ հասկանալի դարձնելով, որ իր՝ վարչապետ, այսինքն՝ խորհրդարանական կառավարման համակարգի պայմաններում երկրի ղեկավար դառնալու հարցը թողնում է օրակարգում:*

*Հանրաքուէի նախօրէին նման շրջադարձային յայտարարութիւն անելը ռիսկի էր ենթարկում նոր Սահմանադրութեան նախագծի ընդունումը: Ակնյայտ էր, որ մեծ կարող էր լինել այն ընտրողների թիւը, ովքեր տրամադրուած էին նախագծին «Այո» ասել՝ կամովին իշխանութիւնից հեռանալու հարցում Սերժ Սարգսեանին «օգնելու» նկատառումով: Վարչապետի պաշտօնը ստանձնելով երկրի ղեկն իր ձեռքում պահելու հնարաւորութեան մասին անգամ թեթեւ ակնարկը կարող էր փոխել այդ մարդկանց տրամադրութիւնը եւ դրդել նրանց՝ կողմնորոշուելու դէպի «Ոչ»-ը, որն առանց այն էլ տիրապետող էր հանրութեան մեծամասնութեան տրամադրութիւններում: Այսինքն՝ պարզ էր, որ Սահմանադրութեան նախագծի ընդունման համար նոր խոչընդոտ ստեղծելուն միտուած այս յայտարարութիւնն անելու համար Սերժ Սարգսեանը պէտք է շատ աւելի լուրջ ու ծանրակշիռ պատճառներ ունենար:*

*Նման ռիսկի գնալը կարող էր արդարացուել երկու դէպքում: Առաջին՝ եթէ իսկապէս նա ցանկանար տապալել իր իսկ նախաձեռնած Սահմանադրութեան փոփոխութիւնների գործընթացը: Այս տարբերակը, սակայն, բացառեց Սերժ Սարգսեանն ինքը՝ նոյն հարցազրոյցում յայտարարելով. «Եթէ ես 100 տոկոսով վստահ չլինէի առաջարկուող համակարգի ֆունկցիոնալութեան վրայ, չէի գնայ այսպիսի փոփոխութիւնների, որովհետեւ, ի վերջոյ, պատասխանատուութիւնը շատ մեծ է...»:*

*Երկրորդ տարբերակն այն է, որ նախագահն այդպիսով փորձեց կանխել թէ՛ անձամբ իր եւ թէ՛ իշխանութեան համար առաջացած աւելի լուրջ ռիսկերի խորացման միտումները: Այդ հնարաւոր ռիսկերի մասին ակնարկեց Սերժ Սարգսեանն ինքը՝ յայտարարելով, թէ իրենք ունեն նախագահի առնուազն երեք թեկնածու: Մի կողմից դրանով Սերժ Սարգսեանը փորձեց ցոյց տալ, թէ որքան մեծ է ՀՀԿ-ի «կադրային ռեզերվը»: Սակայն, միւս կողմից, սա ակամայ բացայայտեց նախագահացու այդ երեք պոտենցեալ «ժառանգների» հարցում վերջնական որոշում չունենալու, չկողմնորոշուելու փաստը եւ դրանով պայմանաւորուած՝ իշխանութեան ներսում ներքին խմբաւորումների առկայութիւնը եւ իշխանութեան «ժառանգորդի» կարգավիճակը ստանալու համար այդ խմբաւորումների լիդերների միջեւ ընթացող դիրքային պայքարը: Այդ պայքարը կարող էր ու, թերեւս, պէտք է սանձազերծուէր հենց իշխանութիւնից հեռանալու՝ Սերժ Սարգսեանի՝ հրապարակայնօրէն արուած յայտարարութեան պատճառով: Ամենայն հաւանականութեամբ, Սերժ Սարգսեանը որսացել էր ՀՀԿ-ի ներսում սկսուած այդ պայքարը, որը յղի է իշխանութեան մոնոլիտը ներսից քայքայելու, իշխանութեան ռեսուրսները փոշիացնելու, այդպիսով՝ գալիք ընտրութիւններից առաջ քաղաքական իշխանութեան դիրքերը թուլացնելու եւ պարտութեան տանելու հեռանկարով:*

*Օրակարգում թողնելով իր՝ վարչապետի պաշտօնը զբաղեցնելու հնարաւորութիւնը՝ Սերժ Սարգսեանն այսպիսով լուծում է մի քանի կարճաժամկէտ եւ երկարաժամկէտ խնդիրներ:*

### Նպատակ առաջին

*Այս քայլն ուղղուած էր բուն սահմանադրական հանրաքուէով ցանկալի ու անհրաժեշտ արդիւնքների ապահովման հարցում իշխանութեան ներքին այդ բոլոր բեւեռների կոնսոլիդացմանը: Ակնարկը շատ պարզ էր. ես դեռ խաղի մէջ եմ, հեռանալու մտադրութիւն չունեմ, հետեւաբար, մի կողմ թողնելով անձնական ներքին ամբիցաները եւ դիրքային պայքարը, կեդրոնացէք «Այո»-ի յաղթանակն ապահովելու այդ պահին գերխնդրի վրայ, ինչը եւ, ի վերջոյ, տեղի ունեցաւ:*

### Նպատակ երկրորդ

*Այս քայլն ուղղուած էր 2017թ. խորհրդարանական ընտրութիւններին ՀՀԿ-ի փառահեղ յաղթանակն ապահովելուն: Եթէ Սերժ Սարգսեանը վարչապետի պաշտօնին իր հաւակնութեան մասին անուղղակի ակնարկները հնչեցնէր հանրաքուէից յետոյ, նրան մեղադրելու էին ոչ միայն անսկզբունքային գտնուելու, այլեւ նոր Սամանադրութեան ընդունումը ցանկացած գնով ապահովելու՝ հանրութեանը, քաղաքական ուժերին եւ սեփական թիմին միտումնաւոր մոլորութեան մէջ գցելու, մանիպուլեացիայի ենթարկելու մէջ: Սա ահռելի հարուած էր լինելու ներկայիս քաղաքական մեծամասնութեան հեղինակութեանը՝ խորհրդարանական գալիք ընտրութիւններում զգալիօրէն բարդացնելով ՀՀԿ-ի վիճակը: Բայց ամենակարեւորը, իհարկէ, սա չէ:*

*Փաստացի, հանրաքուէի արդիւնքում նոր Սահմանադրութեան ընդունումը հնարաւոր եղաւ հենց Սերժ Սարգսեանի շուրջ իշխանական կոնիւնկտուրայի եւ ռեսուրսների մոբիլիզացման արդիւնքում: Նոր Սահմանադրութեան անցկացման համար 63 տոկոս քուէ ապահովելը պարզորոշ ցոյց տուեց, որ միմիայն այս գործօնը կարող է հասարակական ուժեղ վերահսկողութեան պայմաններում ԱԺ ընտրութիւններում ՀՀԿ-ի համար ապահովել խորհրդարանական բացարձակ մեծամասնութիւն ստանալու շանսը: Իսկ դա էական է, որովհետեւ միայն խորհրդարանական միակուսակցական մեծամասնութիւն կազմելու դէպքում ՀՀԿ-ն կարող է երկարաժամկէտ հեռանկարի կտրուածքով պահպանել իշխանութիւնը եւ ապագայ վարչապետի կենսունակութիւնը: Այսինքն, անկախ նրանից՝ վարչապետ կը դառնայ Սերժ Սարգսեա՞նը, թէ՞ նրա ակնարկած թեկնածուներից որեւէ մէկը, ՀՀԿ-ն իշխանութիւնը կարող է պահել, եթէ քաղաքական մեծամասնութիւնը լինի միայն ՀՀԿ-ական, այլ ոչ թէ կոալիցիոն:*

*Միակ բացառութիւնը ներկայիս քաղաքական կոնիւնկտուրայի պայմաններում այն է, որ ՀՀԿ-ի կցորդը դարձած ԲՀԿ-ն անցնի խորհրդարան զգալի մանդատներով: Միայն նրա հետ կոալիցիան է, որ ոչնչով չի տարբերուելու միակուսակցական մեծամասնութիւն ունենալուց: Հենց սրանով կարելի է բացատրել, թէ ինչու է Սերժ Սարգսեանն իր իսկ կողմից բարոյազրկուած ԲՀԿ-ին դեռեւս պահում խաղի մէջ եւ արհեստականօրէն նրա համար «փորա» ապահովում: Մինչդեռ, եթէ իշխանութիւնը ԱԺ խորհրդարանական ընտրութիւններին գնայ իշխանութեան ժառանգման հարցում ակնյայտ անորոշութիւններով, նրա մոտիւացուածութիւնը լինելու է չափազանց թոյլ: Յայտարարելով, որ կարող է դառնալ վարչապետ, Սերժ Սարգսեանն առաջին հերթին հենց իշխանութեան ներսի կեդրոնախոյս ուժերին վերահսկողութեան տակ պահելու խնդիր է լուծում, եւ այդ յայտարարութեան հասցէատէրը գլխաւորապէս հենց իր թիմն էր:*

### Նպատակ երրորդ

*Պէտք է ենթադրել, որ այս յայտարարութեան իրական հասցէատէրերից առաջինը գործող վարչապետ Յովիկ Աբրահամեանն է: Նախագահը հասկացնում է, թէ նրան միանգամից «դահընկեց անելու» նպատակ չի հետապնդում եւ հանգիստ կարող է դեռ աշխատել: Խնդիրն այն է, որ յայտարարելով, թէ ինքը երկրի ղեկավարի առնուազն երեք թեկածու ունի, Սերժ Սարգսեանն առաջին հերթին հարուած է հասցնում հենց Յովիկ Աբրահամեանի դիրքերին՝ վերջինիս հասկանալի դարձնելով, որ նա իր համար ֆաւորիտ չէ իշխանութեան ժառանգորդը դառնալու առումով, ինչպէս կարող է հենց ինքը՝ Աբրահամեանը մտածել: Սա երկընտրանքի առաջ կարող է կանգնեցնել գործող վարչապետին՝ կողմնորոշուելու՝ գնո՞ւմ է Սերժ Սարգսեանի գծած՝ իր համար բազմաթիւ անորոշութիւններով լի ճանապարհով՝ սպասելով, թէ ինչ ճակատագրի իրեն կ՚արժանացնի, թէ՞ յանուն իշխանութեան գրաւման պէտք է առանձին խաղ սկսի՝ յենուելով առաջին հերթին իր կողմից հովանաւորուող եւ հիմնականում հենց իր շնորհիւ կենդանի պահուող ԲՀԿ-ի ռեսուրսի վրայ: Վերջին տարբերակն ընտրելը նշանակում է գնալ ինքնաբացայայտման ճանապարհով, կամ որ նոյնն է՝ դառնալ Սերժ Սարգսեանի մրցակիցը: Իսկ դա, ինչպէս յայտնի է, այնքան էլ լաւ աւարտ չի ունենում հենց*

*Շար.ը էջ 18*



# ՅՈՎՍԷՓ ԹՕՔԱԹԻ «ԱՒԵՐԱԿ ՔՂԻ» ՀԱՏՈՐԻ ՇՆՈՐՀԱՆԴԷՍԸ



Շատ քիչեր տեղեակ են արեւմտեան Հայաստանի երբեմնի հայաշրջ Քղի կամ այլ անունով Քեղի ու Կեղի գիւղաքաղաքի մասին: Այդ շրջանի բնակչութեան շառաւիղներէն է Յովսէփ Թօգաթ, որ գեղեցիկ գաղափարը յղացած էր խորիմաստ ուսումնասիրութեամբ մը պատմավաւերագրական հատոր մը հրատարակել իր ծննդավայրի մասին:

1883-ին ըմբոստ նկրտումների համար արտաքսուել էր ճեմարանից, 1897-ին ասպատախումբ էր կազմաւորել, տասներեք մեծ ու փոքր ճակատամարտերով մտել էր Վան, ձերբակալուել, մահուան էր դատապարտուել, Վանի ռուսական փոխ հիւպատոս Մաեւսքու միջնորդութեամբ փոխադրուել էր Կովկաս, որտեղ երեք տարուայ բանտարգելութիւնից յետոյ ազատ էր արձակուել ու կազմակերպել էր փոխարքայ Գոլիցինի մահափորձը: 1905-ին, իր ասպատախմբով մասնակցել էր հայ-թաթարական բախումներին, 1908-ին, Սահմանադրութեան հռչակումից յետոյ վերադարձել էր Օսմանեան կայսրութիւն, քարոզարշաւ էր նախաձեռնել երկրի ղեկավարութիւնն ստանձնած, Միութիւն եւ Առաջադիմութիւն կուսակցութեան դէմ, հակակառավարական ելոյթներով հանդէս էր եկել Վանում, Ատապազարում, Տիարպեքիրում, Հայնիում, Արղնի-Մատենում, Մալաթիայում, Խարբերդում, ամէնուր երիտթուրքերին անուանել էր, «հայերի դահիճներ», 1914-ի Յուլիսին, Թալէաթի, Էնվերի, Ճեմալի դէմ մահափորձ կազմակերպելու, անկախ, ինքնավար Հայաստան ստեղծելու նպատակով վերադարձել էր Պոլիս: Ձերբակալուել, նպատակները չէր հասցրել իրագործել: Փարամազը նաեւ գրող, հրապարակագիր էր, հեղինակել էր «Պաքու», «Քամու բերածը քամին կը տանի», «Ձեռքերը վեր կամ ճուղուպրիստները» թատերգութիւնները, «Իմ դատավարութիւնը Տաճկաստանում» պաշտպանաճառը, «Հայի պահանջը», «Բարենորոգումները Հայաստանում» խոհագրութիւնները:

-Մենք՝ թուրք մտաւորականներս անգամ, մեր ոչ վաղ անցեալի, յատկապէս հայերին առնչուող իրադարձութիւնները վատ գիտենք: Թուրքական հանրապետութիւնը հիմնադրել էին յանցագործներ, որոնք սանձազերծել էին հայերի, յոյների, ասորիների, այլ, ոչ իսլամ ժողովուրդների ցեղասպանութիւնը, այդ պատճառով էլ սերունդներից հետեւողականօրէն քօղարկում էին իրենց ոճիրները, աւելին՝ խռովարարութեան, դաւաճանութեան, անջատողականութեան մէջ մեղադրում էին իրենց զոհերին: Պատմական ճշմարտութիւնը բացայայտելու, իմ ժողովրդին իր իսկ անցեալի հետ առերեսուելու հնարաւորութիւն ընձեռնելու համար ես, իմ համեստ կարողութեամբ, ձեռնամուխ եղայ Փարամազին նուիրուած գրքի հեղինակմանը, որը գրելիս, յատկապէս մեր երկրի կարծրատիպերը յաղթահարելու առումով, ահռելի ջանքեր ներդրեցի ու վերջնական նպատակս իրականացրի: «Հայ յեղափոխական Փարամազ» գիրքը լոյս տեսաւ Հայոց ցեղասպանութեան 100-րդ տարեդարձի սգահանդէսի օրերին:

Քատիր Աքընը միայն Փարամազի գաղափարախօսական ու մարտական գործունէութիւնը նկարագրելով, նրան, նրա մարտընկերներին, նաեւ մեր՝ այսինքն թուրք ժողովրդի հերոսները ներկայացնելով չի գոհացել, անդրադարձել է Ապտուլ Համիտի հայահալած քաղաքականութեանը, որպէս անմիջական հակադարձութիւն՝ Սասունի, Զէյթունի, Վանի ապստամբութիւններին, Օսմանեան դրամատան բռնագրաւմանը, Ատանայի 1909-ի կոտորածին: Յատուկ, ծաւալուն բաժիններ են նուիրուած Հնչակեան կուսակցութեան պատմութեանն ու գաղափարաբանութեանը, 1915-ի ցեղասպանութեանը:

Հեղինակն իր դրոյթները հիմնաւորելու համար լայն տեղ է յատկացրել լուսանկարներին, վաւերագրերի պատճէններին, փաստական այլ, բազմաբնոյթ նիւթերի: «Հայ յեղափոխական Փարամազ» գիրքն այս տարուայ Ապրիլին, 1350 օրինակով լոյս է ընծայել Անգարայի հեղինակաւոր «Դիփնոթ» հրատարակչութիւնը: Տպաքանակը քսան օրում սպառուել է:

Երկրորդ խմբաքանակը, դարձեալ 1350 օրինակ, սպառուել է մի ամսում: Շուտով հրատարակիչը երրորդ անգամ լոյս կ՚ընծայի գիրքը:

«Հայ յեղափոխական Փարամազը» գրքի մասին դրուատական գրախօսականներ են տպագրել թուրքական «Թարաֆ», «Ռատիքալ», «Էվրասիա», «Պիր կիւն» օրաթերթերը, հեղինակի հետ մտերմիկ հանդիպումներ են ունեցել Անգարայի, Ստամպուլի, Իզմիրի, Նիւրնբերգի, Բեռնի, Փարիզի առաջադէմ թուրք ընթերցասէրները: Այնուամենայնիւ նա իր ամենաբարձր գնահատականը համարում է Քոպանիում իսլամ ծայրայեղականների դէմ մարտնչող Սուպհի Նեժաթի՝ Փարամազ յեղափոխական անուամբ վերամկրտուելը: Այն բանի համար մանաւանդ, որ Սուպհիի զոհուելուց յետոյ իշխանութիւնները որոշել են Փարամազ վերանուանել Միշթենուր լեռնապարը, որտեղ նա իր վերջին մարտն է մղել: Մենք Քատիր Աքընի հետ զբօսնում ենք աղջամուղջում ընկղմուող Երեւանում, եւ նա նրբանկատօրէն չի հարցնում, թէ Հայաստանի Հանրապետութեան մայրաքաղաքում որտե՞ղ է գտնւում Փարամազի յուշարձանը, նրա անունը կրող փողոցը, դպրոցը, թանգարանը: Փոխարէնը ես ուզում եմ իմանալ՝ ինչպէ՞ս է նա պատկերացնում հայ, թուրք ժողովուրդների ապագան: Ժողովրդավար ընկերվարականը ոգեւորւում, համոզուած պնդում է, որ արդարութիւնն ի վերջոյ յաղթանակելու է, թուրք, հայ, քիւրտ ժողովուրդները այսօրուայ Թուրքիայի տարածքում իրենց անկախ պետականութիւններն են ստեղծելու, հաշտ ու համերաշխ համադաշնութիւնում են ապրելու:

Թէ ինչպէ՞ս է կոչուելու այդ նոր պետութիւնը, Քատիրը չի ասում: Գուցէ չի ուզում:



# ՄԱՅՐԸ ՍԻՐՈՅ ԱԿՈՒՆՔ ՅԱՐԱՏԵՒՈՒԹԵԱՆ

*Ռ. ԿՈՐԻԻՆ*

*Կեանքի յարատեւութեան, սերունդների յաջորդականութեան մայր էակը իր նուիրուածութեամբ եւ սիրոյ անսպառ ներաշխարհով միշտ ու հանապազ արժանացել եւ արժանանում է խոր յարգանքի եւ մեծարանքի մարդկանց կողմից իրեն ձօնուած սրտահատոր ներբողականներով եւ գովասանագրերով:*



*Միքայէլ եւ Թութի Ղադիմեաններ տասնհինգ զաւակներով*

*Մեր հայ մայրերը իրենց սրբազան առաքելութեամբ զաւակներ աշխարհ բերելով նեցուկ են կանգնում հայ ազգի գոյութեանը եւ շարունակականութեանը:*

*Մեր մայրերը կեանքի ամենադժնդակ պայմաններում իսկ երբեք ու երբեք չեն գլացել ու չեն ընկրկել իրենց հայադրոշմ պարտականութիւնները խիզախութեամբ կատարելու համար, ահա այս անձնապարգեւ ծառայութեան համար մեր հայութիւնը յանուն երախտագիտութեան Հայաստանի ջրառատ գետն անուանել է՝ Մայր Արաքս, երկիր Հայաստանը՝ Մայր Հայաստան կամ Մայր Հայրենիք եւ մեր ոսկեղնիկ լեզուն՝ Մայրենի լեզու, սրանից էլ աւելի բարձր տիտղոս եւ ոսկեայ շքանշան չի կարելի մարդ երեւակայել, որ մեր հայ մայրերն են արժանացել, դժուար թէ այլ ազգերի մօտ գտնել այսպիսի պաշտամունք:*



*Դաւիթ եւ Գոլբնազ Ղադիմեաններ-զաւակներով եւ թոռներով*

*Սրտագին գովասանքները մեր մայրերի նկատմամբ աւանդուել է անցեալներից նոյն ոգին առկայ մեր օրերում, ճիշտ է ժամանակները փոխուել են, կեանքի ծալքերն ու մտայնութիւնները գիտական դարու կերպ են ստացել, սակայն պէտք չէ մեր հայկական ընտանեկան մշակոյթը, աւանդութիւններն ու սովորութիւնները մոռացութեան հովին տալ՝ լինի դա հայրենիքում եւ կամ Սփիւռքում: Հայութիւնը գոյատեւում է իւրաքանչիւր անհատի հայրենասիրութեամբ, մեր չքնաղ լեզուով, մեր եկեղեցիով, մեր մշակոյթով, մայրերի շատ զաւակների ծննդաբերութեամբ եւ հայօրէն դաստիարակութեամբ:*

*Մեզ մի մասնատուած երկիր է ժառանգ հասել գտնուելով թշնամի դրացիների արանքում, նրանց տնտեսական շրջափակումի եւ պատերազմական վիճակի պատճառով, օրըստօրէ հայրենիքի բնակչութիւնը նուազում է, նորամայրերը բազում զաւակների մտքով չեն նպատակադրւում, եթէ այսպէս շարունակուի հայապահպանութեան առումով դժուարութեան կը մատնուենք մեր աշխարհագրական տարածաշրջանում, պէտք է մեր երիտասարդ մայրերը ներկայ հայրենիքի վիճակը եւ սփիւռքեան պայմանները նկատի առնելով իրենց մէջքերը ամրապնդեն շատ զաւակներ նուիրաբերելու հայութեան: Հասկանում ենք շատ զաւակների սնուցումը եւ դաստիարակութիւնը ծանր է, սակայն ըստ ժողովրդական առածի՝ ով ատամ է տուել հաց*

*Շար.ը էջ 19*

# ՊԱՅՔԱՐ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՌՆՈՒԹԵԱՆ ԴԷՄ



*Ընտանեկան բռնութեան հարցերով զբաղուող ամերիկացի փորձագէտ-ոստիկաններն այսօր Երեւանում պետական պաշտօնեաների եւ հասարակական կազմակերպութիւնների ներկայացուցիչների հետ անցկացրել են քննարկում: Այն ընտանեկան բռնութեան դէմ պայքարում Հայաստանին օժանդակելու հերթական քայլերից է: Հայաստանում ԱՄՆ փոխդեսպան Քլարկ Փրայսը լրագրողների հետ զրոյցում շեշտել է, որ բռնութիւնը թոյլ չի տալիս, որ քաղաքացիները լիարժէք մասնակցութիւն ու ներդրում ունենան իրենց ընտանիքի, համայնքի, երկրի եւ պետութեան տնտեսական, քաղաքական եւ սոցիալական կեանքում: Փոխդեսպանի խօսքով, ինչպէս ԱՄՆ-ում այնպէս էլ Հայաստանում իրենք ընտանեկան բռնութիւնը դիտարկում են ազգային անվտանգութեան տեսանկիւնից:*

*ԵԱՀԿ-ի կողմից վերջերս անցկացուած ուսումնասիրութեան տուեալներով Հայաստանում հարցուածների 60 տոկոսը, հիմնականում՝ կանայք, նշել են, որ կեանքի ընթացքում իրենց նկատմամբ ընտանեկան բռնութեան առնուազն մէկ ձեւ կիրառուել է: Աշխատաժողովի մասնակիցները քննարկումների ընթացքում դիտարկում են այն ուղիները, թէ ինչպէս հասարակութեան բոլոր օղակները կարող են աշխատել միասին՝ այդ թիւը կրճատելու նպատակով:*

*Լաս Վէկասի ոստիկանութեան սպա Քելլի Մքմահիլն ասաց, որ իր կարծիքով, Հայաստանում խնդիրը օրէնսդրութեան մէջ է, քանի որ չկայ որոշակիօրէն յստակ օրէնք, որի հիման վրայ ոստիկանները կարող են արձագանքել եւ քրէական հետապնդում իրականացնել՝ ընտանեկան բռնութիւնների համար, բացառութեամբ, իհարկէ, մարմնական վնասուածք պատճառելու յօդուածով հետապնդում իրականացնելու: Ամերիկացի փորձագէտի գնահատմամբ՝ Հայաստանում նաեւ կայ բաւարար չափով նման յանցագործութիւնների մասին հաղորդագրութիւն չներկայացնելու խնդիրը:*

*Օրէնսդրութեան պակասը որպէս ամենակարեւոր խնդիր ներկայացրեց նաեւ ՀՀ քննչական կոմիտէի նախագահի տեղակալ Արթուր Ղամբարեանը: Նրա տեղեկացմամբ՝ կայ ընտանեկան բռնութեան դէմ պայքարի մասին օրէնքի նախագիծ, սակայն, երկար տարիներ է, ինչ այն տրամաբանական աւարտին չի հասցւում:*

*Հայաստանում ԱՄՆ փոխդեսպան Քլարկ Փրայսի խօսքով՝ ընտանեկան բռնութիւնների դէմ պայքարը լրջագոյն առաջնայնութիւն է:*

*«Մենք կարծում ենք, որ ընտանեկան բռնութեան դէմ պայքարը նպաստում է ազգային անվտանգութեան մակարդակի բարձրացմանը թէ՛ ԱՄՆ-ում, թէ՛ Հայաստանում: Շատ կարեւոր է, որ այդ ուղղութեամբ միասին աշխատեն քաղաքացիական հասարակութիւնը, տուժողները, ոստիկանութիւնն ու իրաւապաշտպանները»:*

*Հայաստանի մէջ բողոքների հիման վրայ յարուցուած գործեր լինում են, սակայն, Արթուր Ղամբարեանի փոխանցմամբ, դրանք շատ յաճախ կարճւում են, քանի որ բողոքող կողմը հաշտւում է: Սա կրկնուող երեւոյթ է: Քննչական կոմիտէն ունի տուեալներ, որ բռնութիւնները պարբերական բնոյթ են կրում: Հաշուի առնելով այդ հանգամանքը՝ տրուել է յանձնարարական, որ անգամ հաշտութեան դէպքում, կոմիտէն կարող է շարունակել նախաքննութիւնը՝ յետագայում աւելի ծանր յանցագործութիւնները կանխելու համար:*

*Ընտանիքի ներսում կատարուած բռնութիւնները, որոնք պատշաճ արձագանք չեն ստանում պետութեան կողմից, հետագայում վերածւում են աւելի ծանր յանցագործութիւնների՝ առայժմ այսպիսին է Քննչական կոմիտէի ներկայացուցչի դիտարկումը:*

**MEHER BABIAN, D.D.S.**
General Dentistry

1111 S. Glendale Avenue
Suite 206
Glendale, CA 91205

Tel: (818) 547-0884
Tel: (818) 547-0476

## ՀԱՅ ԲՌՆՑՔԱՄԱՐՏԻԿՆԵՐԸ ԿԸ ՄԱՍՆԱԿՑԵՆ ՊԱՔՈՒՄ ԿԱՅԱՆԱԼԻՔ ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ՎԱՐԿԱՆԻՇԱՅԻՆ ՄՐՑԱՇԱՐԻՆ

*Մենք կը մասնակցենք Պաքուում կայանալիք օլիմպիական վարկանիշային մրցաշարին: Այս երկու վարկանիշային մրցաշարերը մեր միակ հնարաւորութիւններն են, չենք կարող չօգտուել օլիմպիական ուղեգիր նուաճելու հնարաւորութիւնից:*

*Այս մասին լրագրողների հետ հանդիպմանն ասաց Հայաստանի բռնցքամարտի ֆեդերացիայի նախագահ Արթուր Գէորգեանը:*

*«2015 թուականին ունեցանք մի քանի յաջողութիւններ, տարին վատը չէր: Ուղղակի մեր սպասելիքներն աւելի շատ էին, ամէն գնով ցանկանում էինք օլիմպիական ուղեգիր ունենալ եւ դա մեզ մի փոքր տխրեցրեց: Բայց Աստուած մեզ տուել է շնորհք եւ մենք պէտք է օգտուենք դրանից: Այս տարի Եւրոպայի առաջնութիւնից ունեցանք մէկ պրոնզէ մետալ, որը նուաճեց Արամ Աւագեանը: Կարէն Աղամալեանի համար դրեթէ պարզ է, թէ ովքեր են մասնակցելու Պաքուի վարկանիշային մրցմանն ու Ստամպուլի մրցաշարին: Պաքուում կայանալիք օլիմպիական վարկանիշային մրցաշարին մենք կը մասնակցենք: Քանի դեռ չենք որոշել չգնալ, ուրեմն կը գնանք: Այս երկու վարկանիշային մրցաշարերը մեր միակ հնարաւորութիւններն են, չենք կարող չօգտուել օլիմպիական ուղեգիր նուաճելու հնարաւորութիւնից»,- ասաց Արթուր Գէորգեանը:*

## ԱՐԹՈՒՐ ԱԼԵՔՍԱՆԵԱՆԸ ԼԱՒԱԳՈՅՆՆ Է ԱՇԽԱՐՀՈՒՄ



*Արթուր Ալեքսանեանը կրկին լաւագոյնն է աշխարհում: Աշխարհի կրկնակի, Եւրոպայի եռակի ախոյեան եւ Օլիմպիական խաղերի պրոնզէ մետալակիր Արթուր Ալեքսանեանը երկրորդ տարին անընդմէջ շարունակում է գլխաւորել 98 կգ քաշային ըմբիշների վարկանիշային դասակարգման աղիւսակը: Հայ ըմբիշը այս տարի էլ անպարտելի էր եւ բոլորովին պատահական չէ, որ նա կրկին առաջինն է դասակարգման աղիւսակում: Իրենց քաշային կարգերում տասնեակում են յայտնուել նաեւ Եւրոպական խաղերի արծաթէ մետալակիր 66 կգ քաշային Միհրան Յարութիւնեանը եւ 75 կգ քաշային Արսէն Ջուլֆալակեանը:*

## ՄՈՎՍԻՍԵԱՆՆ ՈՒ ՕԶԲԻԼԻՍԸ՝ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԱՌԱՋՆՈՒԹԵԱՆ ԱՄԵՆԱԲԱՐՁՐ ՎԱՐՁԱՏՐՈՒՈՂ ՖՈՒՏՊՈԼԻՍՏՆԵՐԻ ԹԻՒՈՒՄ



*Մոսկուայի «Սպարտակի» եւ Հայաստանի հաւաքականի յարձակուող Յուրա Մովսիսեանը տարեկան 2.5 միլիոն եւրօ աշխատավարձով Ռուսաստանի առաջնութեան ամենաբարձր վարձատրուող խաղացողների ցուցակում բաժանում է 16-21-րդ տեղերը:*

*«Սպարտակի» եւ Հայաստանի հաւաքականի կիսապաշտպան Արաս Օզբիլիսը տարեկան 2 միլիոն եւրօ աշխատավարձով բաժանում է 30-43-րդ տեղերը:*

*Առաջին տեղում է Սանկտ Պետերբուրգի «Զենիթի» եւ Բրազիլիայի հաւաքականի յարձակուող Հալկն է, որը ստանում է տարեկան 7 միլիոն եւրօ:*

## ՎԱՐՈՒԺԱՆ ՍՈՒՔԻԱՍԵԱՆԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՒԱՔԱԿԱՆԻ ԳԼԽԱՒՈՐ ՄԱՐԶԻՉ



*ՀՖՖ նախագահ Ռուբէն Հայրապետեանի նախագահութեամբ ընթացող Հայաստանի ֆուտպոլի ֆեդերացիայի Գործադիր կոմիտէի նիստի օրակարգում էր Հայաստանի ազգային հաւաքականի գլխաւոր մարզչի նշանակման հարցը: ՀՖՖ նախագահը Գործադիր կոմիտէին ներկայացրել է Երեւանի «Արարատի» գլխաւոր մարզիչ Վարուժան Սուքիասեանի թեկնածութիւնը: Վարուժան Սուքիասեանը հանդէս է եկել Հայաստանի ազգային հաւաքականի գլխաւոր մարզչի պաշտօնում իր ծրագրային մօտեցումներով, ինչպէս նաեւ հանգամանօրէն պատասխանել է Գործադիր կոմիտէի անդամների հարցերին: Գործադիր կոմիտէի միաձայն որոշմամբ Վարուժան Սուքիասեանը նշանակուել է Հայաստանի ազգային հաւաքականի գլխաւոր մարզչի պաշտօնում:*

*Վարուժան Սուքիասեանը ծնուել է 1956 թ. Օգոստոսին, Երեւանում:*

*Որպէս ֆուտպոլիստ՝ 1978-1987 թուականներին հանդէս է եկել Աբովեանի «Կոտայքում»:*

## ԵՒՐՕ-2016. ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄՐՑԱՇԱՐԻ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԵԱՆ ԱՐԴԻՒՆՔՆԵՐԸ




*Փարիզում անցկացուեց Ֆրանսայում կայանալիք ֆուտպոլի Եւրոպայի 2016թ. առաջնութեան եզրափակիչ մրցաշարի վիճակահանութիւնը, որի արդիւնքում 24 հաւաքականներ բաժանուեցին 6 խմբերի: Եւրոպայի գործող ախոյեան Սպանիայի հաւաքականին խմբային փուլում բաժին հասան Չեխիայի, Խորվաթիայի եւ Թուրքիայի թիմերը:*

*A խումբ. Ֆրանսա, Ռումինիա, Շվէյցարիա, Ալբանիա:*

*B խումբ. Անգլիա, Սլովակիա, Ռուսաստան, Ուէլս:*

*C խումբ. Գերմանիա, Լեհաստան, Ուկրաինա, Հիւսիսային Իռլանդիա:*

*D խումբ. Սպանիա, Չեխիա, Խորվաթիա, Թուրքիա:*

*E խումբ. Բելգիա, Շուեդիա, Իտալիա, Իռլանդիա:*

*F խումբ. Պորտուգալիա, Հունգարիա, Աւստրիա, Իսլանդիա:*

*Յիշեցնենք, որ 1984 թուականից յետոյ առաջին անգամ Եւրոպայի առաջնութիւնը կ՚անցնի առանց հոլանտացիների, որոնք չորրորդ տեղն էին գրաւել ընտրական A խմբում (Չեխիա, Իսլանդիա, Թուրքիա, Հոլանտա, Ղազախստան, Լատուիա):*

*Եւրօ-2016-ն անցկացուելու է 2016-ի Յունիսի 10-ից Յուլիսի 10ը եւ պատմութեան մէջ առաջին անգամ Եւրոպայի ախոյեանի կոչման համար պայքարելու են 24 հաւաքականներ:*

## «ԲՈՐՈՒՍԻԱՆ» ՅԱՂԹԵՑ ԽՈՇՈՐ ՀԱՇՈՒՈՎ
### ՄԽԻԹԱՐԵԱՆԻ ԿՈԼՆ ՈՒ ԱՆՀԱՒԱՆԱԿԱՆ ՎՐԻՊՈՒՄՆԵՐԸ

*Ֆուտպոլի Գերմանիայի առաջնութեան 16-րդ տուրում «Բորուսիան» Դորտմունդում 4:1 հաշուով կամային յաղթանակ տարաւ Ֆրանկֆուրտի «Այնտրախտի» նկատմամբ:*

*Խաղի հաշիւը 6-րդ րոպէին բացեց «Այնտրախտի» գերմանացի յարձակուող Ալեքս Մէյերը, բայց մինչեւ ընդմիջում գնալը տանտէրերը խփեցին պատասխան գոլը: 24-րդ րոպէին հաշիւը 1:1 դարձրեց Հայաստանի հաւաքականի կիսապաշտպան Հենրիխ Մխիթարեանը, որն առաջին խաղակէսի վերջնամասում նաեւ կորցրեց 100 տոկոսանոց կոլային պահ:*

*44-րդ րոպէին հիւրերի կիսապաշտպան Սլոբոդոն Մեդոեւիչը հեռացուեց խաղադաշտից, իսկ «Բորուսիայի» գաբոնցի յարձակուող Պյեր-Էմերիկ Օբամէեանգը չկարողացաւ անվրէպ իրացնել 11 մետրանոց հարուածը:*

*Քանակական առաւելութիւն ստացած դորտմունդցիները երկրորդ խաղակէսում ունէին մեծ առաւելութիւն եւ խփեցին եւս 3 գոլ: Ընդմիջումից քիչ անց աչքի ընկաւ Օբամէեանգը, իսկ 62-րդ րոպէին «Բորուսիայի» աւագ Մատս Հումելսը հաշիւը դարձրեց 3:1: Երկրորդ խաղակէսում Հենրիխ Մխիթարեանը կորցրեց եւս մէկ իրական կոլային պահ՝ չկարողանալով գրաւել դատարկ դարպասը: Նա փոխարինուեց 82-րդ րոպէին՝ 15-րդ խաղն անցկացնելով Գերմանիայի ընթացիկ առաջնութիւնում, որում դարձել է 6 գոլի եւ 7 գոլային փոխանցման հեղինակ: Խաղի վերջակէտը դրեց Մխիթարեանին փոխարինած Ադրիան Ռամոսը, որն աչքի ընկաւ 86-րդ րոպէին:*

*Թոմաս Տուխելի թիմը 38 միաւորով ամրապնդուեց երկրորդ տեղում եւ շարունակում է 5 միաւոր զիջել Միւնխենի «Բաւարիային»:*

## ՄՈՈՒՐԻՆԻՕ. ԴԵՌ 3.5 ՏԱՐԻ ՈՒՆԵՄ «ՉԵԼՍԻՈՒՄ» ԵՒ ՉԵՄ ՀԵՌԱՆԱՅ



*Լոնտոնի «Չելսիի» պորտուգալացի գլխաւոր մարզիչ Ժոզէ Մոուրինեոն բացառել է ժամանակից շուտ անգլիական թիմից սեփական կամքով հեռանալու տարբերակը:*

*«Ես կատարում եմ «Չելսիի» հետ իմ պայմանագիրը: Դեռ 3.5 տարի ունեմ եւ չեմ պատրաստւում հեռանալ: Ես տեսնում եմ աշխարհի ցանկացած ակումբ մարզելու հնարաւորութիւն, թէեւ կան մի քանի ակումբներ, որոնք երբեք չեմ գլխաւորի:*

*Մրցաշրջանի սկզբում մենք միոններով հեռու էինք մեր իրական խաղամակարդակից: Նախորդ ամիս զգալիօրէն լաւացրել ենք մեր խաղն ու արդիւնքը: Դա յատկապէս երեւաց «Տոտենհեմի» եւ «Պորտուի» հետ հանդիպումներում: Սա դեռ սկիզբն է»:*

*Պրեմիեր լիգայի 16-րդ տուրի հանդիպումը «Չելսին» կանցկացնի Դեկտեմբերի 14-ին՝ հիւրընկալուելով ընթացիկ առաջատար «Լեսթեր Սիթիին» (32 միաւոր): «Չելսին» 15 միաւորով 14-րդ տեղում է:*

## ՍԵՐԸ ԱՐՏԱՅԱՅՏԵԼՈՒ 5 «ԼԵԶՈՒ»

Հոգեբանները կը պնդեն, որ սիրոյ պահանջքը մարդու հիմնական յուզական պահանջքն է: Մենք ուղղակի պէտք ունինք, որ մեր կողքին ըլլայ մտերիմ, սիրելի մէկը:

Սակայն կը պատահի նաեւ այնպէս, որ նոյնիսկ մեր կեանքին մէջ սիրելի անձնաւորութեան առկայութեան պարագային մեզի բաւարար չափով սիրելի չենք զգար:

Եթէ մենք կ'ուզենք սիրել գիրար, ուրեմն պէտք է գիտնանք, թէ ինչ կ'ուզէ դիմացինը: Մենք պէտք է ցուցադրենք, արտայայտենք անոր մեր սէրը այնպէս, որ ան հասկնայ մեզ այնպէս, կարծես կը խօսինք նոյն լեզուով: Մէկը կրնայ տեսնել սէրը այնտեղ, ուր ուրիշ մը ոչինչ կը նկատէ, եւ՝ հակառակը:

Լեզուներու տարբերութիւնը կը կազմէ մարդկութեան մշակոյթի անքակտելի մասը: Եթէ մենք կ'ուզենք շփման մէջ ըլլալ արդիւնաւէտ եւ յաղթահարել մշակութային պատնէշները, ուրեմն պէտք է ուսումնասիրենք անոնց լեզուն, որոնց հետ կը փափաքինք շփուիլ:

Նոյնը յոյզերու պարագային: Լեզուն, որով դուք կ'արտայայտէք ձեր սէրը, կրնայ տարբերիլ ձեր զուգընկերոջ լեզուէն, ինչպէս հայերէնը չինարէնէն: Եւ շատ հազուադէպ կը պատահի, որ զուգընկերները, սիրելիները խօսին սիրոյ միեւնոյն լեզուով: Իւրաքանչիւրը կ'օգտագործէ իր լեզուն եւ կը զարմանայ, թէ ինչու դիմացինը կարծես զինք չի լսեր: Անօգուտ է սէր խոստովանիլ հայերէն, եթէ դիմացինը կը հասկնայ միայն չինարէն: Սէր պէտք է խոստովանիլ, արտայայտել այն մարդու լեզուով, որուն կը սիրես: Ըստ հոգեբաններու՝ գոյութիւն ունի սիրոյ 5 հիմնական լեզու՝ 5 միջոց, որոնց օգնութեամբ մարդիկ կ'արտայայտեն եւ կ'ընկալեն սէրը:

1. Ջերմ խօսքեր: Որոշ մարդոց համար իբրեւ սիրոյ յատուկ ցուցանիշ հանդէս կու գան գովասանքը, հաճոյախօսութիւնները, բարի խօսքերը: Գովեցէ՛ք տղամարդը, ըսէ՛ք, թէ ան ինչ լաւ է, խելացի, ինչ հրաշալի կերպով ամրացուցած է դարակը, օգնած է ձեզի լուծել խնդիրը եւայլն: Ըսէ՛ք կնոջ, թէ ինչ նուրբ է ան, մեղմ, հմայիչ, որ միակն է ձեզի համար, ինչ հրաշալի ճաշակ ունի եւայլն: Խոստովանեցէ՛ք մէկզմէկու, որ շնորհակալ էք, որ սիրելին ներկայ է ձեր կեանքին մէջ:

2. Համատեղ գործեր/ժամանակ: Իսկ միւսներու համար ալ սիրոյ ցուցանիշ են համատեղ գործերը: Խանութներով շրջիլը, մեքենան նորոգելը, բնակարանի յարդարումը, նոյնիսկ գրոյցը ընթրիքի ժամանակ եւ անոր յաջորդող ֆիլմի դիտումը լիովին կարելի է համատեղ գործեր անուանել: Եթէ ասիկա է ձեր զուգընկերոջ լեզուն, աշխատեցէք աւելի շատ ժամանակ միասին անցնել, կարեւոր չէ տան մէջ, թատրոն երթալով, թէ՝ զբօսանքի:

3. Նուէրներ: Ոմանք կը կարծեն, որ սիրոյ բարձրագոյն արտայայտչաձեւերն են նուէրները: Ի դէպ, նուէրի գինը կապ չունի, կարեւորը ինքնին փաստն է: Եթէ ասիկա ձեր տարբերակն է, ուստի ձեր սիրելիին նուէրներ առէք: Ան կը գնահատէ ատիկա: Մի՛ մոռնաք ժամանակ առ ժամանակ անակնկալներ մատուցել՝ փոքր եւ մեծ:

4. Ծառայել/օգնութիւն: Ծառայել ըսելով կը հասկնան, թէ դուք ինչ կ'ընէք ձեր սիրելիի համար, այսինքն՝ կը կատարէ՞ք արդեօք այն գործողութիւնները, որոնք կ'ակնկալէ ձեր սիրելին ձեզմէ եւ որոնք կարեւոր են անոր համար: Օրինակ, կինը կ'արդուկէ տղամարդու հագուստը, կը պատրաստէ անոր սիրելի ուտելիքները եւայլն:

5. Մարմնական շփում: Գիրկընդխառնումները, համբոյրները, հպումները յարաբերութիւններու հիմնարար բաղադրիչներէն են: Եթէ ձեր սիրելին կը նախընտրէ այս լեզուն, ուրեմն մի՛ անտեսէք մարմնական շփումը՝ գրկեցէք, համբուրեցէք, շոյեցէք, ձեռքը բռնեցէք: Յիշենք, որ սիրոյ լեզու ըսելով կը հասկնանք հիմնական, առաջատար լեզուն, մնացած 4 լեզուները երկրորդական են: Առաջնութիւնը տուէք հիմնական լեզուին, սակայն երբեւէ մոռացութեան մի՛ մատնէք մնացածները:

## ՍԻՐՈՅ ՀՈՐՄՈՆԸ ԿՐՆԱՅ ԿԻՆԵՐՈՒՆ ՄՕՏ ԸՆԿՃԱԽՏ ՅԱՌԱՋԱՑՆԵԼ

Սիրոյ հորմոնը կրնայ կիներուն մօտ ընկճախտ յառաջացնել:

Նման եզրակացութեան եկած են գիտնականները: Անոնց իրականացուցած հետազօտութեան իբրեւ արդիւնք պարզուած է, որ օքսիտոցինը, որ կ'անուանեն նաեւ սիրոյ հորմոն, տարբեր ազդեցութիւն կ'ունենայ տղամարդոց եւ կիներու օրկանիզմներուն վրայ:

Գիտնականները պարզած են, որ այդ հորմոնը կրնայ ոչ միայն ուրախութեան, այլեւ ընկճախտի պատճառ դառնալ: Հետազօտութեան արդիւնքները ցոյց տուած են, որ ընկճախտի մէջ գտնուող աղջիկները ունին օքսիտոցինի բարձր մակարդակ: Հետեւաբար, ըստ գիտնականներու, այդ հորմոնը կրնայ բացասաբար ազդել անոնց ինքնազգացողութեան վրայ, այսինքն ընկճախտի վիճակի մէջ գտնուելու պարագային անոր օգտագործումը կրնայ բացասական հետեւանքներ ունենալ:

ՎԱՐԶՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ
1060 North Allen Ave Pasadena, CA 91104

Գրասենեակները վերանորոգուած
եւ յարմար վարձքերով
հեռաձայնել՝ (626) 398-0506

## Ի՞ՆՉ ԿԸ ՆՇԱՆԱԿԷ ՍԻՐԵԼ ԻՆՔՆ ԻՐ ԱՆՁԸ. ԵՍԱՍԻՐՈՒԹԻ՞ՒՆ, ԹԷ...

Ենթադրութիւն կայ, որ մարդ որքան շատ սիրէ ինքզինք, այնքան քիչ կը սիրէ ուրիշները, որ սէրը սեփական անձի նկատմամբ «եսասիրութիւն» է: Երբ մարդը կը սիրէ իր ընտանիքի անդամները, բայց ոչինչ կը զգայ «օտար»ներուն նկատմամբ, ատիկա կը դիտուի իբրեւ սիրելու անկարողութեան նշան:

Սեփական կեանքին մէջ հաստատուիլը, սեփական երջանկութիւն հաստատելը, զարգացումը հիմնուած են սիրելու ընդունակութեան վրայ: Եթէ անհատը ընդունակ է արդիւնաւէտ սիրոյ, ան կը սիրէ նաեւ ինքզինք, եթէ ընդունակ է սիրել միայն ուրիշները, ան ընդունակ չէ սիրել ընդհանրապէս:

Եթէ մարդը կը սիրէ զինք շրջապատողները եւ հոգ կը տանի անոնց, ուստի անոր սէրը ինքն իր հանդէպ ոչ մէկ կապ ունի եսասիրութեան հետ. Անոր համար շատ դիւրին է ու բնական սիրել ինչպէս ինքզինք, այնպէս ալ ուրիշները: Սիրոյ զգացումները քեզի եւ ուրիշներու հանդէպ փոխկապակցուած են: Ուրիշներու հանդէպ սէրը կը հարստանայ եւ լիարժէք կը դառնայ, եթէ մարդը ինքզինքն սիրելու փորձ ունի, եւ հակառակը: Եսասիրութիւնը եւ սէրը սեփական անձի հանդէպ ոչ միայն նոյնական են, այլեւ աւելին՝ հակադիր: Եսասէրը ինքզինք չափազանց քիչ կը սիրէ, քան չափազանց շատ, իրականութեան մէջ ան կ'ատէ ինքզինք: Ան դժբախտ է եւ տենդագին կերպով կը ձգտի քաղել կեանքէն այն բարիքները, որոնց մուտքը ինքը փակած է: Կը թուի, թէ ան ինքն իրեն չափազանց շատ կը հոգայ, բայց իրականութեան մէջ ան ընդամէնը անյաջող փորձեր կ'ընէ լրացնելու իր «ես»-ի հոգատարութեան պակասը: Ճիշդ է, որ եսասէրը ընդունակ չէ ուրիշները սիրել, բայց ան ընդունակ չէ նաեւ ինքզինք սիրել: Յիշեցէք, երբ դուք կը սիրէք դուք ձեզ, ձեր ներքին աշխարհը կը լուսաւորուի, արտաքին աշխարհն ալ՝ վարակուելով ձեր հոգիի լոյսէն, կը դառնայ աւելի պայծառ ու հրաշալի:

## ԻՆՉՈ՞Ւ ԵՐԲԵՄՆ ԱՌԱՒԵԼԱԳՈՅՆ ԱՐԴԻՒՆՔԻ ՀԱՍՆԵԼՈՒ ՁԳՏՈՒՄԸ ՎՆԱՍԱԿԱՐ Է

Հետազօտողները կատարելապաշտները բաժնած են 3 տեսակի եւ բնութագրած են անոնցմէ իւրաքանչիւրը: Պարզուած է, որ ամէն ինչի մէջ լաւագոյնը ըլլալու ձգտումը կրնայ բացասաբար անդրադառնալ ինչպէս մարդու, այնպէս ալ զայն շրջապատող մարդոց վրայ:

Բոլոր կատարելապաշտները կարելի է բաժնել 3 տեսակի. Ինքնակեդրոնացած՝ մարդիկ, որոնք իրենք իրենց հանդէպ բարձր պահանջներ կը ներկայացնեն եւ կը ձգտին ամէն ինչի մէջ լաւագոյնը ըլլալ բացառապէս ինքնակատարելագործման համար:

Շրջապատի վրայ կեդրոնացած կատարելապաշտներ՝ մարդիկ, որոնք կը փորձեն կատարեալ ըլլալ իրենց շրջապատին համար եւ վերջապէս՝ կատարելապաշտներ, որոնք բարձր պահանջներ կը ներկայացնեն դիմացինին այլ ոչ թէ իրենք իրենց:

Գիտնականները պարզած են, որ առաջին տեսակի կատարելապաշտները շփման մէջ ամենահաճելի մարդիկ են. անոնք կը մտածեն դիմացինի մասին, ուշադիր են քաղաքավարութեան կանոններուն, միշտ պատրաստ են օգնելու, լսելու զրուցակիցը: Իսկ անոնք, որոնք կը ձգտին կատարեալ ըլլալ շրջապատին համար, սովորաբար ցած ինքնագնահատականով ինքնամփոփ մարդիկ են: Իսկ 3-րդ տիպի կատարելապաշտները աւելի շատ բացասական յոյզեր կը յառաջացնեն մարդոց մօտ: Անոնք կը տառապին ինքնասիրահարուածութեամբ ու գոռոզութեամբ:

## ՈՍԿԷ ՄԻՏՔԵՐ, ՈՐՈՆՔ Կ'ՕԳՆԵՆ ԱՒԵԼԻ ԼԱՒ ՅԱՐԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՐԴՈՑ ՀԵՏ

1. Ժամանակի ընթացքին դուն պիտի հասկնաս, որ կեանքի մէջ իւրաքանչիւր հանդիպում ունի իր նպատակը: Որոշ մարդիկ պիտի փորձեն քեզ, միւսները պիտի օգտագործեն, իսկ ոմանք ալ պիտի սորվեցնեն: Եւ որ ամենակարեւորն է՝ պիտի ըլլան մարդիկ, որ մէջդ պիտի արթնցնեն լաւագոյնը:

2. Կողքիդ պահէ այն մարդիկը, որոնք իսկապէս կը սիրեն քեզ, կը քաջալերեն, կը բարձրացնեն ու կ'երջանկացնեն: Եթէ գիտես այնպիսի մարդիկ, որ նշուածներէն ոչ մէկը կ'ընեն, ուրեմն հեռացէք անոնցմէ:

3. Սէրը կապ չունի ոչ սեռային յարաբերութիւններու, ոչ ճոխ ժամադրութիւններու եւ ոչ ալ դուն քեզ ցոյց տալու հետ: Սէրը՝ ըլլալն է այն մարդու հետ, որ քեզ կ'երջանկացնէ այնպէս, ինչպէս ուրիշ ոչ ոք:

4. Յաճախ մենք կը թերագնահատենք հպումներու, ժպիտներու, բարի խօսքերու, լսելու, անկեղծ հաճոյախօսութիւններու եւ մտահոգութեան փոքրիկ քայլերու նշանակութիւնը, որոնցմէ իւրաքանչիւրը կեանքը գլխիվայր շրջելու կարողութիւն ունի:

5. Ամենագեղեցիկ բանը տեսնելն է, թէ ինչպէս կը ժպտայ ան, զոր կը սիրես եւ որ աւելի գեղեցիկ է, երբ գիտես, որ դուն ես այդ ժպիտին պատճառը:

6. Յարաբերութիւններդ մտածուած ընտրէ: Աւելի լաւ է միայնակ ըլլալ, քան վատ ընկերակցութիւն ունենալ:

7. Սիրահարուիր, երբ պատրաստ ես, ոչ թէ երբ մինակ ես:

8. Իրական երջանկութիւնը ներսէն կու գայ եւ ոչ թէ ուրիշէն: Երբեք չսխալիս՝ սպասելով որեւէ մէկուն կամ որեւէ բանի, որ պիտի երջանկացնէ քեզ:

9. Մի՛ ընտրեր մէկը, որ գեղեցիկ է աշխարհի համար, ընտրէ՛ մէկը, որ գեղեցիկ կը դարձնէ աշխարհը քեզի համար:

10. Լաւ յարաբերութիւնները պարզապէս չեն պատահիր, անոնք ժամանակ կը պահանջեն, համբերութիւն եւ ջանք երկու մարդու, որոնք իսկապէս կը փափաքին միասին աշխատիլ:

Պատրաստեց՝ ՆԱՐԻՆԷ Ն.

## ԱՍՏՂԵՐԸ Ի՞ՆՉ Կ'ԸՍԵՆ

ԽՈՅ Մարտ 21-Ապրիլ 19
Քեզի տրուած ցուցմունքները յաճախ կ՛անտեսես, որովհետեւ միշտ քու կամքդ կ՛ուզես բանեցնել: Յիշողութիւնդ քեզ պիտի խաբէ՝ որու հետեւանքով սխալ մարդոց հետ պիտի շփուիս: Խօսքերուդ ուշադիր եղիր:
Բախտաւոր թիւերդ են: 2,5,12,21,26

ՑՈՒԼ Ապրիլ 20-Մայիս 20
Յաճախ հրահանգներով կը խօսիս շուրջիններուդ հետ եւ քեզմէ կը հեռացնես ընկերներդ: Այս շաբթուայ ընթացքին պատահելիք դէպք մը, մեծ արձագանք պիտի արձանագրէ: Օգնութիւն մը պիտի ստանաս:
Բախտաւոր թիւերդ են: 3,10,24,29,36

ԵՐԿՈՒՈՐԵԱԿ Մայիս 21-Յունիս 20
Ուրիշներու տկարութիւններուն վրայ խօսիլը, քեզի զուարճութեան եւ լաւ զգալու միջոց մը կը նկատես: Օգտակար ըլլալու ես բարեկամներուդ իրենց նեղութիւններուն մէջ: Ուտելիքներուդ լաւ ուշադրութիւն ըրէ:
Բախտաւոր թիւերդ են: 1,5,14,24,33

ԽԵՑԳԵՏԻՆ Յունիս 21-Յուլիս 22
Ամէնօրեայ կեանքդ շատ զբաղ ըլլալուն՝ շատ մը առիթներ կը փախցնես ըլլալու զաւակներուդ հետ: Գործընկերոջդ ծրագրին արգելք մի հանդիսանար, որքան որ ալ անոր չհամաձայնիս: Զարախօսութիւններէ խուսափիր:
Բախտաւոր թիւերդ են: 4,11,25,30,36

ԱՌԻՒԾ Յուլիս 23-Օգոստոս 22
Քու ազդեցութիւնդ շատ մեծ է շուրջիններուդ վրայ, անոր համար փորձէ լաւ տիպար ըլլալ անոնց, որպէսզի բարելաւես անոնց կեանքը: Գործատիրոջդ շատ հաւատարիմ ըլլալուդ, շատ սիրուած եւ յարգուած ես:
Բախտաւոր թիւերդ են: 5,9,18,27,31

ԿՈՅՍ Օգոստոս 23-Սեպտեմբեր 22
Քիչ մը բամբասանք լսելը քեզի ուրախութիւն կը պատճառէ: Պատասխանատուութիւններուդ շատ ճշգրտօրէն կը հետեւիս եւ գովեստի արժանի ես: Բարեկամներդ լաւ ընտրէ որ հաճելի ըլլան անոնք նաեւ ընտանիքիդ անդամներուն:
Բախտաւոր թիւերդ են: 2,11,26,32,33

ԿՇԻՌՔ Սեպտեմբեր 23-Հոկտեմբեր 22
Ընտիր առաքինութիւններդ լաւ բաներու գործածելով, շատերուն կեանքի իտէալը կ՛ըլլաս: Դրամ հայթայթող բաներու վրայ կ՛ուրախանաս, բայց վստահութիւնդ ամբողջութեամբ անոնց վրայ մի դներ որպէս երջանկութեան միջոց:
Բախտաւոր թիւերդ են: 5,14,16,24,34

ԿԱՐԻՃ Հոկտեմբեր 23-Նոյեմբեր 21
Բարոյական շատ մաքուր կեանք մը կ՛ապրիս եւ մաքուր լեզու կը գործածես: Ձեռքերդ միշտ կարօտեալներուն օգնութեան երկնցուր : Մրցումի մը պիտի մասնակցիս եւ լաւ կերպով պիտի իրագործես զայն:
Բախտաւոր թիւերդ են: 8,19,20,31,35

ԱՂԵՂՆԱՒՈՐ Նոյեմբեր 22-Դեկտեմբեր 21
Խոնարհ եւ ազնիւ անձնաւորութիւն մըն ես եւ գործերդ յարատեւութեամբ կը շարունակես: Նեղութեան պարագային յաճախ կը դիմես սխալ անձերու, ձախողութիւն յառաջացնելով: Համբերատար եղիր:
Բախտաւոր թիւերդ են: 2,22,31,35,36

ԱՅԾԵՂՋԻՒՐ Դեկտեմբեր 22-Յունուար 19
Սիրով եւ միաբանութեամբ ուրախ մթնոլորտ կը ստեղծես ընտանեկան յարկէդ ներս: Չար խորհուրդներ տխուր կացութ-իւններու առջեւ պիտի ձգէ քեզ: Ընտանիքիդ հետ ժամանակ պիտի անցընես:
Բախտաւոր թիւերդ են: 10,12,24,29,33

ԾՈՎԱՆՈՅՇ Յունուար 20-Փետրուար 18
Զաւակներուդ ամէնօրեայ գործերով յաճախ հետաքրքրուելով՝ տաքուկ հարազատութիւն մը կը ստեղծես տանդ մթնոլորտին մէջ: Ուշադրութեամբ նկատի առ եւ լաւ արժեւորէ կեանքիդ ճամբու ընթացքը:
Բախտաւոր թիւերդ են: 2,5,8,22,34

ՁՈՒԿ Փետրուար 19-Մարտ 20
Ընտանեկան պարտաւորութիւններդ տպաւորիչ կերպով կը կատարես: Բարեսիրական գործերու մէջ մասնակցութիւնդ չափազանց անհրաժեշտ է, հոգեկան գոհունակութիւն ստանալու համար:
Բախտաւոր թիւերդ են: 3,17,22,33,34

## ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆԻ ՊԼԱՆՆԵՐԸ

*Շարունակուած էջ 7-էն*

*մրցակից դարձողների համար:*

Նպատակ չորրորդ

*Չի բացառւում, որ անկախ ամէն ինչից՝ Սերժ Սարգսեանն իսկապէս ուզում է մնալ իշխանութեան «կնքահօր» կարգավիճակում՝ արդէն վարչապետի պաշտօնն զբաղեցնելով: Նա, իհարկէ յայտարարել է, թէ չի պատրաստւում իր պաշտօնավարման ժամկէտից անգամ մէկ օր պակաս աշխատել: Սա անուղղակի հաւաստիացում էր Թիմին առ այն, որ չի պատրաստւում խորհրդարանական ընտրութիւններից առաջ հրաժարական տալ նախագահի պաշտօնից եւ ՀՀԿ-ի ցուցակը գլխաւորելով՝ մեծամասնութիւն ձեւաւորելու պարագայում միանգամից վարչապետ դառնալով լուծել իշխանութեան ամբողջական «վերաթողարկման» հարցը: Բայց անցկացուած Սահմանադրութիւնը նրա համար ապահովում է այլընտրանքային «թաքնուած» մի մեխանիզմ: Դրա 212-րդ յօդուածով յստակ սահմանւում է, որ հանրապետութեան նորընտիր նախագահի կողմից իր պաշտօնը ստանձնելու օրը կառավարութիւնը հրաժարական է ներկայացնում, որը նախագահն ընդունում է անյապաղ: Այսինքն՝ իր պաշտօնավարման ժամկէտը սպառելուց յետոյ, երբ ԱԺ-ն կ՛ընտրի ՀՀ նոր նախագահին, կառավարութիւնը ստիպուած է լինելու հրաժարական տալ: ԱԺ մեծամասնութիւնն այդ դէպքում լիարժէք հնարաւորութիւն է ստանում Սերժ Սարգսեանին «թախանձելու»՝ մի կողմ դնել հպարտութիւնը եւ իշխանութիւնից հեռանալու խոստումները եւ յանուն «երկրի փրկութեան»՝ ընդունել վարչապետի պաշտօնը զբաղեցնելու իրենց առաջարկը: Եւ իբրեւ իսկական հանրապետական՝ Սերժ Սարգսեանը, բնականաբար, չի կարող անտեսել իր գործընկերների խնդրանքը եւ «դժկամութեամբ կարող է ստանձնել վարչապետի պաշտօնը: Արդիւնքում կը ստացուի, որ մի կողմից Սերժ Սարգսեանը կատարեց ինքնակամ պետութեան ղեկավարի պաշտօնը չզբաղեցնելու՝ ժողովրդին տուած խոստումը, իսկ միւս կողմից կատարեց պարտքը իր կուսակիցների առջեւ: Նման սցենարը նշանակում է, որ 2017թ. խորհրդարանական ընտրութիւններից յետոյ ձեւաւորուելիք կառավարութիւնը լինելու է ժամանակաւոր՝ անկախ նրանից՝ ով է լինելու վարչապետը:*

*Սա, իհարկէ, չի նշանակում, որ Սերժ Սարգսեանը գործընթացները պարտադիր այս նպատակակէտին է տանում: Ոչ ոք չի կարող ասել՝ ի վերջոյ ի՞նչ կայ նրա մտքին, մինչեւ այդ մասին բազմաթիւ նոր հարցականներ առաջադրելով՝ չխօսի անձամբ ինքը: Սերժ Սարգսեանը շախմատիստ է, իսկ շախմատիստները միշտ ունենում են պահեստային քայլեր ցանկացած իրավիճակի համար՝ կամ պարտուողի դերում չյայտնուելու կամ էլ ստեղծուած անցանկալի իրավիճակից նուազագոյն կորուստներով դուրս գալու համար: Այնպէս որ, սպասենք 2017-ի խորհրդարանական ընտրութիւններին, որոնք փաստացի սկսուել են դեռ 2013-ին, երբ առաջին անգամ նախագահը յայտարարեց սահմանադրական փոփոխութիւններ նախաձեռնելու եւ իշխանութեան անցնցում վերարտադրման համար աւելի բարենպաստ պայմաններ ստեղծող խորհրդարանական կառավարման համակարգին անցնելու մասին: Չնայած միւս կողմից՝ 2017-ին սպասել չարժէ: Մինչ այդ սկսուելու են քաղաքական ուժերի վերադասաւորումները, որոնք շատ աւելի պերճախօս կը լինեն, քան Սերժ Սարգսեանի կողմից արուելիք որեւէ յայտարարութիւն կամ տրուելիք որեւէ պարզաբանում:*

## ԱՆՆԱԽԸՆԹԱՑ ՈԳԵԿՈՉՈՒՄ ՀԱԼԷՊԻ ՄԷՋ

*Շարունակուած էջ 13-էն*

*ուխտեց հաւատարիմ մնալ Քսաններու կտակին եւ ընթանալ անոնց ուղիէն:*

*Այնուհետեւ ցուցադրուեցաւ Փարամազեան սերունդի պատմական դէպքերը ներկայացնող տեսաերիզ մը:*

*Ապա միութեան վեթերան անդամներէն, նախկին Կեդրոնական Վարչութեան անդամ Սարգիս Գուգուեան պարգեւատրուեցաւ Կուսակցութեան բարձր կարգի «Փարամազ» շքանշանով:*

*Աւարտին, Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդը իր պատգամը փոխանցեց նշելով, թէ «Քսան կախաղաններ»ու փարամազեան սերունդի հրաշալի փաղանգը մեր ազգին ու հայրենիքին նուիրուեցաւ: Սրբազան հայրը ըսաւ.«Նահատակները ժողովուրդներու կեանքին մէջ պատմական փորձառութեամբ շաղախուած սրբութիւններ են: Ժողովուրդներ կ՚ապրին իրենց նահատակներու արիւնով: Անոնք ինկան, որպէսզի մենք ապրինք, կախաղան բարձրացան, որպէսզի հորիզոնին վրայ իրենց երազած հայրենիքը վեր բարձրանայ յաղթական, իսկ համայն հայութիւնը հայրենիքով առաւել եւս գօտեպնդուած շարունակէ իր պատմական երթը»: Տէր Շահան նշեց, թէ հարիւր տարի ետք զուգադիպող այս հանդիսութիւնը, պատմական այս անկլինադարձային յիշատակութիւնը մեզ կը գօտեպնդէ եւ մեզի կու տայ այն յոյսն ու վստահութիւնը, որ մեր ժողովուրդը, ազգն ու հայրենիքը անմահ են: Ապա ան մեր պատմութեան ընթացքին հաւաքական նահատակութիւններէ օրինակներ մէջբերեց: Եզրափակելով սրբազան հայրը ըսաւ, թէ Փարամազ եւ իր ընկերները գաղափարի ընդմէջէն անմահութեան հաւատքով իրենք զիրենք ընծայեցին պատմական այն բագինին, որ Հայաստան կը կոչուի: Անոնք ինքնընծայմամբ դարձան մեր կեանքի տագնապալից բոլոր շրջանները լուսաւորող փարոսներ:*

*Հանդիսութիւնը փակուեցաւ «Պահպանիչ» աղօթքով:*

*Ծանօթ: Հալէպի ոչ ապահով ու դժուարին պայմաններու մէջ այսպիսի որակեալ միջոցառում ի գործ դնելը հրաշքի համազօր է: Հակառակ մարդուժի հետեւողական կորուստին, Հալէպ մնացող Հնչակեանները փաստեցին ոչ միայն իրենց գոյութիւնը, այլ իրենց կարողութիւնը նման որակեալ ձեռնարկներ կազմակերպելու:*

## ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ





ՅԱԿՈԲ ԵՒ ՆԱՅԻՐԻ ՊԷՔԱՐԵԱՆՆԵՐՈՒ (հայր եւ դուստր) մահուան քառասունքին առիթով յաւարտ Ս. Պատարագի տեղի պիտի ունենայ հոգեհանգստեան պաշտօն Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ մէջ Փասատինա 2215 E. Colorado Blvd. Pasadena 91107, Կիրակի, Դեկտեմբեր 20, 2015ին:

Խնդրողներ՝
Այրին Տիկ. Նարկիզ Պէքարեան եւ զաւակները
Մայրը Այրի Տիկ. Վարդուհի Պէքարեան
Տէր եւ Տիկ. Սթիւ եւ Մարալ Էլ Եուսըֆ (Լոնտոն)
Տէր եւ Տիկ. Ռաֆֆի եւ Վարդուհի Նալպանտեան եւ զաւակները (Կիպրոս)
Փաթրիք եւ Վերգինէ Տօնիկեան եւ զաւակը (Կիպրոս)
Տէր եւ Տիկ. Գօգօ եւ Մարօ Պէքարեան եւ զաւակները (Յունաստան)
Տէր եւ Տիկ. Յովհաննէս եւ Սիլվա Քարաօղլանեան եւ զաւակները (Պէյրութ)
Տէր եւ Տիկ. Կարօ եւ Անի Պէքարեան եւ զաւակները (Լոս Անճելըս)
Տէր եւ Տիկ. Խաչիկ եւ Սոֆիա Պէքարեան եւ զաւակները (Պէյրութ)

Հոգեհանգստեան պաշտօնէն ետք հոգեճաշ պիտի մատուցուի Հ.Մ.Մ.ի «Կարօ Սողանալեան» սրահին մէջ 1060 North Allen Avenue Pasadena CA 91104.

## ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ ՄԱՏԵՆԱՇԱՐ

Շարունակուած էջ 8-էն

(discourse) յառաջընթացին սատարելու համար:

Այս նախաձեռնութիւնը նաեւ պիտի նպաստէ հայերէնի արդիականացման՝ նոր բառապաշարի ընդգրկումով, եւ պիտի ընդլայնէ հայերէնի եւ հայերէնէ թարգմանիչներու թիւը: Նպատակ ունինք գործիքներ եւ պաշարներ զարգացնելու եւ տարածելու, ինչպէս եւ թարգմանիչներու վարժընթացներու մեր աջակցութիւնը բերելու:

Թարգմանելի բնագիրներ յանձնարարելու համար ստեղծուած է մասնագէտներու միջազգային յանձնախումբ մը, որուն անդամներն են.

-Վարդան Ազատեան՝ Երեւանի գեղարուեստի պետական ակադեմիա. Աշոտ Յովհաննիսեանի անուան հումանիտար հետազօտութիւններու ինստիտուտ. դասախօս, Երեւանի ժամանակակից արուեստի ինստիտուտ (Հայաստան):

-Շուշան Աւագեան՝ գրական թարգմանիչ եւ դասախօս, Վկայեալ թարգմանութեան ծրագիր, Մարդկային եւ ընկերային գիտութիւններու գոլէճ, Հայաստանի Ամերիկեան համալսարան (Հայաստան):

-Ռէմոն Գէորգեան՝ հետազօտութեան վաստակաւոր տնօրէն, Աշխարհաքաղաքականութեան ֆրանսական հիմնարկ, Փարիզ-VIII համալսարան, Սէն-Տընի (Ֆրանսա):

-Արմինէ Իշխանեան՝ դասախօս եւ ընկերային քաղաքագիտութեան ու զարգացման մագիստրոսներու ծրագրի տնօրէն, Լոնտոնի տնտեսագիտութեան եւ քաղաքագիտութեան համալսարան (Մեծն Բրիտանիա):

-Յակոբ Կիւլլիւճեան՝ հայագիտութեան դասախօս, Մերձաւոր Արեւելքի լեզուներու եւ մշակոյթներու բաժանմունք, Գալիֆորնիոյ համալսարան, Լոս Անճելըս (ԱՄՆ):

-Արտաշէս Մարկոսեան՝ «Արաս» հրատարակչատան նախկին խմբագիր (Թուրքիա):

-Սմբատ Յովհաննիսեան՝ դասախօս, Համաշխարհային պատմութեան ամպիոն, պատմութեան բաժին, Երեւանի պետական համալսարան (Հայաստան):

-Արա Սանճեան՝ հայոց եւ միջին արեւելեան պատմութեան դասախօս, Հայագիտական Հետազօտութեանց կեդրոնի վարիչ, Միչիկընի համալսարան, Տիրպորն (ԱՄՆ):

«Գալուստ Կիւլպէնկեան Թարգմանական մատենաշար»ը յատուկ կայքէջ մը պիտի հաստատէ, ուր պիտի հրամցուին թարգմանութիւններու էլեկտրոնային տարբերակներ (ըստ կարելիութեան), նոր եզրոյթներու թարգմանութիւններ, թարգմանական հարցերու քննարկումներ, պաշարներ եւ առիթներ՝ թարգմանիչներու եւ հրատարակիչներու համար, ինչպէս եւ լուրեր՝ նախաձեռնութեան զարգացման մասին:

«Գալուստ Կիւլպէնկեան Թարգմանական մատենաշար»ի պաշտօնական բացումը տեղի պիտի ունենայ Փետրուար 2016ին, երբ թարգմանուելիք ու հրատարակուելիք բնագիրներու սկզբնական ցանկը յայտարարենք: 2016ի առաջին ամիսներուն նաեւ պիտի սկսինք ընտրել թարգմանիչներ եւ հրատարակիչներ, որոնց հետ գործակցութիւնը պիտի կայանայ մրցոյթի եւ ուղղակի պատուէրի խառն գործընթացով:

Յաւելեալ տեղեկութիւններու համար, հաճեցէք կապ հաստատել «Գալուստ Կիւլպէնկեան» Հիմնարկութեան Հայկական Համայնքներու բաժանմունքին հետ, գրելով carmenias@gulbenkian.pt հասցէին կամ հեռաձայնելով 351 21 782 3347 թիւին:

## ՄԱՅՐԸ ՍԻՐՈՅ ԱԿՈՒՆՔ

Շարունակուած էջ 15-էն

էլ կը տայ, ամէն մէկ երեխայ սիւն է թէ՛ հայրենիքի համար թէ՛ ծնողի համար: Հայրենի Պետութիւնը լաւապէս ըմբռնել է վիճակը եւ բաւական լայն առաւելութիւններ է նկատի առնում բազմազաւակ ընտանիքների համար: Քաջ գիտակցում ենք, որ որակին պիտի հետեւել ոչ թէ քանակին, սակայն մեր երկրի դիրքը պահանջում է քանակով եւս աճել, բազմանալ եւ հզօրանալ, շատ թանկագին տարածքներ ենք կորցրել, բազմամիլիոն ժողովուրդ են մեզանից կոտորել, հետեւաբար՝ բազմանալով կարիքն ունենք մեր ժողովրդի թշնամիներից պաշտպանուել, եթէ ոչ տխուր ապագայ ենք ունենալու:

Հայութիւնը սոսկալի աղէտների հետեւանքով հետզհետէ պակսել է, իսկ մեր հարեւանները թւով բազմացել, որովհետեւ ոչ ջարդ են տեսել ոչ կոտորած, այլ իրենք են այդ կոտորածը կազմակերպել հայերի նկատմամբ եւ երկիրը բռնագրաւել, քանի որ նրանք իշխող դերումն են եղել եւ շարունակ հայերին նեղել, կեղեքել ու հալածել են իրենք մնալով անփորձանք ու բարեկեցիկ, այդու ծնելիութիւնը նրանց մօտ շատ աւելին է եղել քան մեր մօտ: Թող մեր երիտասարդ մայրերը հայրենասիրական ոգով քաջալերուած օրինակէն իրենց տատիկներին եւ մեծերին եւ իրենց ճիգ ու ջանքը չխնայեն այս ազգանուէր գործում, թող նկատի առնեն որ բազմազաւակ մայրերը շատ առաւելութիւններ են արժանի դառնում:

Համաձայն մեր ստացած տեղեկութեան Իրանի Քեամարա գաւառի յանձնախմբից այդ գաւառում բազմազաւակ ընտանիքները մեծ թիւ են կազմել, որոնցից երկուսն ենք ներկայացնում առձեռն ունենալով իրենց նկարները: Նոյն նահապետական գերդաստանից երկու եղբայրներ՝

Միքայէլ եւ Թուլթի Ղադիմեաններ տասնհինգ զաւակներ, Դաւիթ եւ Գոլբնազ Ղադիմեաններ տասներկու զաւակներ, չնորհալի մարդիկ իրենց ընտանիքներով:

Ըստ առածի՝ մէկ ընտանիքը նմուշն է հարիւրաւոր ընտանիքների: Այդ բազմազաւակ ընտանիքների լուսահոգի ծնողները չկան, սակայն նրանց յետնորդ՝ զաւակները, թոռներն ու ծոռները... կան եւ ապրում են կենդանի պահելով իրենց պապիկի եւ տատիկի պայծառ յիշատակը: Նրանց զաւակներից Հրանդը Իրանի Ալֆալաւալ կաթնամթերքի նշանաւոր ընկերութեան երկար տարիների պատասխանատու ճարտարագէտն է եղել: Վազրիկը մասնակցում է Իրան-Իրաք պատերազմում եւ վիրաւորւում է: Միհրանը ազգ.-հասարակական գործիչ, Թեհրանի Հայոց Թեմի պատգամաւոր եւ այլ յանձնաժողովներով: Աբրահամը այժմ Քեամարա-Լիլեան յանձնախմբի պատուոյ անդամ է:

Յուսով ենք մեր երիտասարդ ամուսնացողները ըմբռնելով մեր ժամանակների պահանջները կ'անեն պարտն ու պատշաճը, որպէսզի մեր գլուխները բարձր փառք ու պատւով մեծարենք մեր պաշտելի մայրերին:

Հայ մայրերը ազգի յարատեւ ակունքն են կեանքի,

Մէկ-մէկ փայլուն աստղ են հայոց աստղազարդ երկնքում,

Նրանցով է գիտնական ծնւում եւ դառնում պարծանքը հայի,

Նրանցով է հերոսը զէնքը ձեռքին հայրենիք պաշտպանում:

Մայրութիւնը երջանկութիւն է, բայց առաւել երջանկութիւն, երբ մայրիկը բազում զաւակների ծնունդ է տալիս, քանզի ամէն մի զաւակը մայրիկի կեանքի սիւնն է, քաղցր ու անխորտակ յենարանը եւ հայրենիքի հերոս պաշտպանը:

## ԱՐՄԷՆ ՔԻՒՐՔՃԵԱՆԻ «ԻՍԼԱՄԱՑ(ՈՒ)ԱԾ ՀԱՅԵՐ»Ը

Շարունակուած էջ 13-էն

ները, իրենց այգիին, պարտէզին, դաշտին հունձքին երախայրիքը կը նուիրաբերէին եկեղեցւոյ, եւ անոր կենդանի մէկ օրինակն է որ բարեբախտաբար մինչեւ այսօր կը շարունակուի Աստուածածնայ տօնին օրը՝ խաղողի նուիրաբերումով: Խաղողէն գինին կը պատրաստուի, իսկ գինին կը ներկայացնէ Քրիստոսի արիւնը եւ նաեւ առաջին հրաշագործութիւնը Յիսուսի, երբ Կանայի հարսնիքին ջուրը գինիի փոխեց: Գինեձօնը հայկական սիրուն եւ իմաստալից արարողութիւն մըն է, ուր հեղինակի մը հրատարակած գիրքին օրինակը կ'օծուի գինիով՝ հոգեւորականի մը կողմէ: Ս. Երրորդութիւն Հայց. Առաք. Եկեղեցւոյ հովիւ Արժ. Տ. Զարեհ Աւագ Քհնյ. Զարգարեան օրհնեց հեղինակն ու իր տիկինը եւ ապա հայկական գինիով կատարեց գինեձօնի արարողութիւնը: Հեղինակը՝ Արմէն Քիւրքճեան իր խօսքին մէջ ըսաւ. «...Ես ալ մեր Ցեղասպանութեան 100-ամեակին առթիւ, որպէս իր ընտանիքին անդամները ջարդուած, տարագրուած, չարչարուած անձի մը զաւակ, փափաքեցայ մեր յիշողութիւնները թարմացնել: Անցեալը պիտի յիշենք իր դառնութիւններով ու ցաւերով, բայց ոչ թէ վրէժխնդրութեան ու վրիժառութեան զգացումները սրելու մտօք, այլ անցեալի սխալները չկրկնելու իմաստութեամբ»:

Պրն. Քիւրքճեան իր խորին շնորհակալութիւնները յայտնեց «Նոր Սերունդ» Մշակութային Միութեան ու կարգադիր յանձնախումբին, նաեւ Պոլսահայ Մշակութային Միութեան, որ ընդառաջելով իր թելադրանքին՝ մասնակից եղաւ գինեձօնին, ինչպէս նաեւ Տ. Զարեհ Աւագ Քահանային, որ բարեհաճեցաւ կատարել գինեձօնի արարողութիւնը: Շնորհակալութիւն յայտնեց «Նոր Սերունդ»-ի տիկիններուն, որոնք այս երեկոյթի հիւրասիրութիւնը պատրաստած էին, նաեւ Պրն. Պետրոս Գոգորեանին, որ տրամադրած էր հայկական գինին: Յատուկ շնորհակալութեան խօսք ուղղեց Պրն. Անդրանիկ Զիլինկիրեանին, որ կարճ ժամանակի մէջ գիրքը կարդալէ յետոյ, բծախնդիր ու խնամեալ աշխատանք մը տարած էր:

Ձեռնարկի աւարտին ներկաները հիւրասիրուեցան սուրճով եւ անուշեղէններով, ապա հեղինակը գիրքէն օրինակներ մակագրեց ներկաներուն: Հեղինակին փափաքին համաձայն, գիրքի վաճառքէն գոյացած գումարը յատկացուեցաւ «Նոր Սերունդ» Մշակութային Միութեան:

# Ամանորեայ Պարահանդէս




Կազմակերպութեամբ՝

## Հ.Մ.Մ.-ի Տիկնաց Միութեան

Հինգշաբթի, Դեկտեմբեր 31, 2015
երեկոյեան ժամը 8:30-էն սկսեալ
Հ.Մ.Մ.-ի «Կարօ Սողանալեան» սրահին մէջ
1060 N. Allen Ave. • Pasadena, CA 91104

ՀԱՄԱԴԱՄ ՃԱՇԵՐ • ՀԱՃԵԼԻ ԱՆԱԿՆԿԱԼՆԵՐ • ՔՕԹԻՅՕՆ
ԸՆԿԵՐԱՅԻՆ ՋԵՐՄ ՄԹՆՈԼՈՐՏ • ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ D.J.

Մուտքի Նուէր /Admission: $50.00 • Children 6-12: $25.00 • 5 & Under Free
Տոմսերու համար դիմել (626) 398-0506